



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



6 117  
1116




1999





Հովհաննիսյան  
17270




Պ Ը Տ Ը Ս Ի Ը Ն Ի

Գիմադրական յայտարարութեանց պարոն Յարու-  
րիւնի Թ. Յովհաննեանց միջոցաւ բուռց 681և682 Ար-  
շաղուսոյ օրագրի, ընդդէմ յայտարարեալ տետրակի  
մերոյ, որ ընդիմութեան պարունակէր զուղիղ անցս  
անցից էւ զգրաւոր ապացոյցութիւնս վաւերական ժո-  
ղովոյ մերազնեից քաղաքիս (Կալկաքայոյ) 1861 Դեկ-  
տեմբերի 8, ընդդէմ ապօրինաւոր գնացից հոգեւորա-  
կանաց մերոց Զուղայու էւ տեղւոյս :

Արպէս ի յսկզբան յայտարարո թեան յիշեալ տետ-  
րակի մերոյ ցաւեցար ի սրտէ, ցաւմբ և այժմ. ար-  
դարև ցաւմբ ի ցումալի պարտաւորութիւնս, յորմէ որ-  
չափ օտարանալ ջանամբ, այնքան և բռնաբարչ ի նոյն  
հրախրիմբ ակամայ սարտաւորութեամբ մերոյ հակա-  
ռակորդաց. որոյ թէպէտ, ըստ իմաստնոյն, պատաս-  
խանենն անխցելուչ, սակայն տուր ասէ սատասխանի,  
զի դնիցէ նա չափ անձին առ յոչ ճարմարտակել անաս-  
ման արչաւանօր :

Վերոյ պատուելի հեղինակն, արտաբոյ նախաձանոյց  
Մայիսի 20 յայտարարութեանց, Ս. սյրլիլի 20 թուով աշ-  
խատասիրեալ նոյնահանգէտ տետրակ մի, զոր և առա-  
քեալ աստ ի ձեռն ծրաջան մշակացն՝ վիմատիպ ընթեր-  
ցար. որոյ և զպատասխանն արդէն տուեալ բաւարարե-  
ցուցեալ եմք զբարեմիտ ընթերցողս. զոր թէպէտ ամե-  
նարաւական ըստ իրաւանցն, յաւերջող իմն համարէր  
որ. սակայն մեր անդատին դիպելորն

17270



4/1116-60  
28. 1117

առնել ոչ ճանճբանամբ . թերևս զաղարկցին առարկայ,  
խնդիրք յուժնէտ աշխատանաց , և մի այլ ևս միւս ան-  
գամ ոտնգտիտ յտաթիճան բարձր լինել , քաջ յարմա-  
րելով զվտանգ վիժման ի բարձու , մանաւանդ որ անձն-  
եայն է հ՛ծանրութեամբն բաւէ խորտակել զոսկերան :

Աղբուրեմն խոստովանեցաք զանհաճութիւն մեր յայս-  
գոյն անչաճ և բազմաջնատ պատաղումն . սակայն որպէս  
անայցաք սկամայ կամաւ բուն արկանեմք յայս տետրակ  
մեր , ո՛չ նպատակաւ ամբոխելոյ զմիտս ընթերցողաց և  
ո՛չ որսալոյ զհաճութիւն ումեր (ըստ օրինակի զիմա-  
ղբողաց մերոց՝ որք գուն գործեն արուեստիւ ճարտա-  
սանական գրչի քօղել զմերն ճշմարտութիւն) , այլ որք  
ընթերցեալ են զառաջին տետրակ մեր՝ որ հայեր յան-  
խոտոր անցս անցից , ընթերցեալ և զերկրորդն՝ որ հայեր  
ի պատասխանի գրութեան սրբազան Առաջնորդի առ  
գերապատիւ պարոնայս Պ . Աւետ և Յ . Սվզալեան ,  
ընթերցեալ և զերրորդն՝ որ պատասխանէր տետրակի  
ատայեալ հեղինակին , ընթերցեալ և զայս՝ մարթային  
յարմարել ընդ գրուածոց հեղինակացն և իրաւարանել  
թէ ո՛ր իրաւացի և ո՛ր անիրաւ , ո՛վ գրգռիչ և ո՛վ մեղ-  
միչ , և թէ ճշմարտութիւն ո՛ր կողմն հակադրի :

Պատուելի հեղինակն խօսելով ըստ քմաց , ամենայն  
վաստ իւր մերկանգամ հիմնէ ի վերայ մտացածին իրա-  
ւանց , որպէս թէ որ խօսել կարծի ընդ երեխայս , որք  
չգիտեն որոշել զիսկն ի ստուերէն և զուղիղն ի ստոյ .  
այլ մեր ո՛չ այնպէս , այլ որպէս խոստանամք և առնեմք ,  
զապացուցութիւն մերոց բանից պատրատեմք առաջի  
դնել ցանկացողաց . ոյր սակս տամք հեղինակին հասկա-  
նալ և զարժանն , որչափ քան զամենեսեան լու գիտէ  
ինքն :

Ի բանն թէ , «երևելապէս պատճառ երկպառակու-

Թեան յ զնոր արդ ի մէջ Հայ հասարակութեան կալ կաթայու եղև քահանայն (այն է յարգելի եղբայրս) որ հրբեմն փոխանորդ ամենասարաիս Առաջնորդին Չուզա յու, զնա յայն ձեռնարկ հրապուրեցին ներքին նուպտակ իւր և կիրք, որք աներևութապէս զօրացեալ էին ի փառասիրութենէ և յընկերատեցութենէ՝, և այլն : (1)

Իւրաքանչիւր բառ գրուածոցն սրահանջէ զխտորութիւն երկար՝ որոյ առնելն մեք ոչ խուսատիւմք : Սակայն երկարութիւն խօսից օն անդր ճապաղեն զիմաստս և ձանձրացուցանեն զլսելիս . ուստի պատեհ համարիմք միով կամ երկորումք հակիրճ հատանել զմէջսն՝ ասելով հեղինակին ի սմին ժամու՝ թէ սխալեալ ես և սխալիս զի առկի՞ն յուզելոյ զՀայ հասարակութիւնն չէր և չէ քահանայն, այլ թէ՛ երևելապէս և թէ՛ աներևութարար, հարազատ փեսայդ տէր Մարտիրոս և աներորդիդ իսկ եղեալ, որք խորհրդածեալ գրեցիր անձոռնի, անխտհեմ խստատճ և անիծարան գրութիւնս առ նոսա ի 1855 ա մի Յուլիսի 15 թուականաւ և 279 համարաւ, և անծանօթ նորեկ Առաջնորդիդ թէ՛ կամայ և թէ՛ ակամայ ձեռնագրել տուեալ . զոր հասարակաց ժողովով ծալեալ զգիրն՝ լի նախատանօք յերես անմեղութեան նորին գարձուցին ձեզ ի Չուզայ, և յայնմօրէ ընկալեալ աներևութապէս զվէրս ի սրտի, յաւուրս յայտասիկ երևելապէս ի լոյս ընծայեցին . որոյ և վասն ցաւիմք ի սրտէ, և վասն երկարութեան գրոյն ասացելոյ, չկարեմք ի սմա գաղափարել զօրինակն :

Ապացոյց բանիս վկայ է ժողովն մերազնէից տեղւոյս, յամի 1858 Դեկտեմբերի 2, գումարելոյ ի ներքին սրահի շինուածոցն Նազարէթայ սուրբ եկեղեցւոյ մերում . ուր

(1) Սակաւիկ ՚ի վայր, անադօտ լուսով փայլելոց են րէ ով ընկերատեաց ես յուսմէ ծագեալ նախանձն :

խորհրդածէր ընդդէմ սրբազան Առաջնորդին գրել և բողոքել յԷջմիածին և տալ յետս կոչել զնա ի Զուղայու . և լինէր խակ , եթէ Աւագերէցն ի ժողովի անդ ձեռն ի սրտի չխնդրիցէր զանցիշաչարութիւն ի ժողովոյ և չերաչխաւորէր զանձն և զպատիւ իւր ի գրել Առաջնորդին և բարեկամաց ոմանց ի Զուղայ , առ ի ամբել զխառութիւն վանականացն . ահա անցր ժողովոյ յիշատակարանի եկեղեցւոյն և տպագրեալ ի Մ. Ճեմարանի , ցրուեալ ի բազում տեղիս . մին օրինակ առաքի սրբազան Առաջնորդի և արբանեկացն նորին , ( յորոց մին ճանաչի դիմադրող հեղինակն ) և մին օրինակ յատենի սրբազնատուրբ Կաթուղիկոսին : Արդ՝ թո՛ղ իրաւասցեն լսողք թէ ո՛վ յուղիչ և ո՛վ խաղաղարար , և թէ գործովն Աւագերիցու՝ բարեկամութեա՞ն թէ թշնամանաց առիթառ Առաջնորդն երևի . թո՛ղ զայն՝ որ Աւագերէցն ըստ երաչխաւորութեանն մինչ ընուլ զխոստումն կամեցեալ , և ծանուցեալ նախ Առաջնորդին կողմնակի և ապա առ վեշտասան անձինս ուղղակի , ոչ այլինչ խնդրեալ քան կարգ , կանոն և չափաւորութիւն յամենայն աստիճանաւորս , ընկալնու զերկեանն վրէժիւնդրութիւն ի հատուցումն , որպէս և օրինակ դրձւածոցն կայ առ սրբաղնակատար Հայրապետն մեր , և թերևս յապա հրատարակեալ դնին ի տեսութիւն հասարակաց :

Ի բանն , «ներքին նպատակ նորս և կիրք էր լինել եզակի որ ըստ համբաւոյ մասին ի մէջ ամենայն քահանայից՝ որք կային յամենայն վիճակս Հնդկաստանի և Պարսկաստանի , այսինքն լինել գերադաս , գերիշխան և մի միայն անզուգական ըստ պատուոյ և սոյն» :

Պատասխանի չազակրատանացն ավարտեմք ասել , զի եթէ այդ իցէր բաղձանք սրտի Աւագերիցուն , արդէն ըստ վկայելոյ Առաջնորդի և ճանաչելոյ համբռն թե-

մահանաց Հնդկաստանի և Պարսկաստանի, նա միայն էր եզակի ըստ պատուոյն և վիայէին բազումք, թէ ասէր Մարտիրոսն մինչ որպէս մին հասարակ քահանայ նորոգ ձեռնադրեալ վիճակաորեցաւ ի Ապղիաթա, նու վաւ յառաջացեալ ի շնորհ մարդկային, նովաւ և որոյ քաղցր ակնարկութեամբ պատուեալ ի հասարակութենէ յետս ի Զուղայ չողաւ և որոյ բարեհամբաւ կեալն ի Զուղայ պարծանք էր ինքեան, մանաւանդ յորժամ նա կեղծաորութեամբ սրբեգրեալ էր զինքն Սւազերկցուն և նորա անխար հաւատով հաւատացեալ նմա որպէս որդի. մինչ զտուն և զկարասիս տան խորոյ ետ նմա առնել հողոյ հաւասար. զոր ինչ ցայսօր՝ զինի ամաց բազմաց, անաւարտ զհաշիւն ունի թէ և նա տուեալ նմա զաւարտմանն զիր:

Սպացոյց բանիս վիայէ դրութիւնն սրբազան Սոաջնորդի առ Սւազերէցն ի ժամանակի կոչմանն և ընտրութեան սրբազնասուրբ Մատթէոսի ի պատիւ կաթուղի կոսութեան, թէ «ըստորում օրէն է ի ձեռնադրիլ կաթուղիկոսի, ամենայն վիճակաց Սոաջնորդաց ներկայանալ ի հանդէս, կամ մին ի նախադաս քահանայից ելանել փոխարէն թեմակալ Սոաջնորդի, արդ կամ ես պարտիմ ելանել կամ դու որ նախապատիւ գտանիս ի համօրէն քահանայս Զուղայու և Հնդկաստանի, մանաւանդ և յընտրութիւն հանգուցելոյն սրբազան Ներսէսի կաթուղիկոսին՝ անդատին դու էլը ընտրեցեալ (դէպուտադ) ի զիմաց Սուրէնեան արքեպիսկոպոսի ի վիճակէս Զուղայու և այլն»: Արում խոնարհութեամբ պատասխանեալ Սւազերկցուն և զանձն անբաւական ի հրաւերն տուալ՝ հրաժարի սիրով:

Արդ եթէ յառաջ բերեալ իրաւունք անբաւական՝ թէ չէր նա ցանկացօղ պատուոյ և մեծարանաց և անզուգա-

կան կեցից , յաւելումք և աստ յօղուած մի 'ի գրութենէ սրբազան Առաջնորդի առ Աւագերէցն առայն վախճան, յորժամ նա աղերսեալ էր Առաջնորդին փոխանցել զաւագերիցութեան սպառլն առ հանգուցեալ տէր Յովհաննէս Պալատանեան . որով թո՛ղ ընթերցողք քննեսցեն , զի եթէ Աւագերէցն փառասէր ոք իցէր և կամ կամեցող անզուգական կեցից , գրելո՞ց էր առ Առաջնորդն զոր գրեաց : Ահա օրինակ գրոյն :

« Որպէս ամուր մթաղինք և թանձրամած ստուերք ոչ կարեն ծածկել զլուսափայլ ճառագայթս արեգական, ըստ այնմ և չարամտութիւնք չարասիրաց ոչ կարեն ընդ վարագուրաւ արկաննել զբարեսրտութիւն բարեգործաց : Ըստ այսմ , բարեկարգ կառավարութիւն ձեր ակնբերև են ամենայն նրբագնձին նկատողաց և անթագչելի են 'ի հոգեակեր գիտողաց , որք չլիցեն կուրացեալ ստուերաւ նախանձու և ստելութեան . արդ այն:քիկ են որք զմեզ ի ձեզ առաւել վստահ առնեն , և ըստ այսպիսի յուսոյ մերոյ քաջ գիտեմք թէ զօրութեամբն Աստուծոյ մշակ էք աշխատաւոր բանասոր երկրի, պաշտօնեաց էք պաշտօնակատար ըստ արժանւոյն սրբութեանց տանն Աստուծոյ , և քահանայ էք ճանաչող զպատիւ քահանայութեան ձերոյ . որք գիտէք՝ զիրաւունս Տեառն ի բերանոյ ձերմէ խնդրեն , և թէ հրեշտակք էք Տեառն Ամենակալի :

Ի խնդրելն ձեր ի մէնջ վասն փոխարկելոյ ի ձէնջ զպատիւ աւագերիցութեան առ տէր Յովհաննէս (Պալատանեան) քահանայն, պատասխանեալ եմք առ այն ի 21 Մայիսի , համարաւ 201 , թէ անկարելի է ինձ փոխել զբանս իմ և անհնարին է ինձ զկատարեալ նկատողութիւնս և ճանաչողութիւնս իմ յայլ վիճակ յեղափոխել . ուրեմն որպէս ի նախկին պատասխանազրութեան իմում առ

ձեզ խնդրեալ եմ զձերն ն երողանտո թիւն , սյծմ . և զնոյն խնդրեմ . . . երբ ըստ յանձնելոյ Տեան մեզ ըզձեզ , կալայ զձեզ և ոչ թողից . ըստ որոյ՝ թէ և իցեն բազում օրիորդք և թազուհիք , բայց ոչ կարեն գտանել զէք կատարեալ սիրոյ , որ իցէ տարբացեալ յամենայն մասունս սեպհական նպատակի հարազատ սիրելոյ իւրոյ , և այլն՝ : (2)

Ահա ծանուցաւ թէ աւագերէցն չէր փառասէր , կամ նախանձօղ փառաց ընկերին . սակայն հաստատեսցուք զհակառակ նախանձ տէր Մարտիրոսի ի նոյն իմաստ առ սրատիւ և մեծարանս աւագերիցու առաւել քան զինքեան , առ որ ջանայր ընկենուլ զնա ի սրատուոյ և լինել անզուգական , որպէս կարծի արարեալ , նախ կրկնանուիրակ լինելով ընդդէմ նորա . երկրորդ խնդրեալ և ընդ իւր բերեալ գրովն Առաջնորդի վասն գլորելոյ զնա և յաջորդելոյ զինքն ի տեղի , (գորմէ արդէն խոստովանեալ ի գրութեան իւրում առ Առաջնորդն տեսանի ի ստորև , թէ չեզիտ պատեհութիւն ի լոյս հանելոյ) . երրորդ յորդորելով զմանս վասն գրելոյ Առաջնորդին և հանելոյ զաւագերէցն ի թեմէն . չորրորդ զխաւար գրեցելով ի Չիչրու լի ստութեամբ ընդդէմ նորա առ Առաջնորդն . հինգերորդ գրելով ի Չաւուց առ անհատ ոմն , թէ հուպ ընդ հուպ կործանելոյ էր զնա :

Ի խոնարհագիր նշմարանսն թէ «բազում անգամ գրեալ է նա , թէ յայտմ ժամանակի գոհարն ընդ խեցուոյ համարի մի , հիլ , գիլ և զանջաֆիլն են մին գին , թէ հաստ ու բարակն է մին գին . վսյ գայ բարակ մանողին» :

Պատասխան նշմարանացն է այն իսկ հասարակեալ առակն աշխարհի , վարեալն միշտ ներհակականօք , և ի

(2) Նագելի հարազատութիւն սիրոյ , որ նաժշտիւ խոցեաց զքնքուշ սիրտ քագունելոյն :

դատախազութիւն բանից նորին դիմադրողի , մինչ հա-  
 յեցեալ յիրանունս արդի եղելութեանց՝ ընդդէմ՝ բազ-  
 մաբարոզ արդեանց և վկայից . նազի առ ի՞նչ մեղաւ դը-  
 բիչն ի դիպոյ պատկանաւորաց օրինակել զառակն. օտար  
 միանգամայն յինքնատուղծ պատճառէ և վարկուածոյ  
 առարկայ խնդիր հեղինակին , որչափ և առ ժամանա-  
 կաւս յարմարի ասել և երկրորդել զնոյնն անդատին դոր-  
 ծովք . զի եթէ չէր այնպէս՝ ծառայն ո՛չ նստէի ի յատենի  
 Տեառն նախանձու դառն , ո՛չ հալածիւր բազմամեայ  
 վիայեալ մշակ եկեղեցւոյ և տանն ազգի , ո՛չ աղաւաղ-  
 իւր վարք և բարք վկայեալ անձանց և նորօք խակ զօրա-  
 նայր ի նմին ինքնագոյ հեղինակն :

Ի բանն թէ «գորավիզն այդմ իւրում նպատակի ու-  
 նէր զսէր և զչնոր՛հ սրբազան Առաջնորդին առ ինքն , որ  
 ևս նմա զարտօնութիւն աւագերիցութեան , փոխանոր-  
 զական իշխանութեան , զաւագանակրութեան , և զար-  
 զարեաց զբնջ նորա հայրապետական պարգեւեալ խա-  
 չիւ և Ուսաց կայսերական շքանշանաւ (5) . ունէր զօ-  
 րավիզ և զսէր Հայ հասարակութեան Արկաթա քա-  
 զաբի յինքն (4) , զազատութիւն տեղւոյն , զլինեւն մարդ-  
 որ անտուն և անժառանգ , և զխաւորարար դճոխու-  
 թիւնն , որ է յեսան կրից , և այլն՝ :

Առ պատասխանի վայրաստիւն հաճիմք ասել , զի նա-

(5) Շքանշանն կայսերական ոչ ումէք վայել է քան  
 պսակաւոր կայսեր է . արժանաժառանգ քաղակալին՝  
 որում արժանացուցէ Տեր վայելել զամս բազում  
 քնդ համայր վայելչութեամբ սերնդոցն :

(4) Այս իսկ եղեալ հրապուրիչ զրպարտաբարա-  
 գրոյն սրբազան Առաջնորդի է . արկանելոյն ՚ի նոսա  
 ատէլութիւն , որպէս տեղի ունեցաւ առ դիրախաբ  
 ոմանս :

խտարաշարեալ որ եթէ չլիցէ մտաթափ՝ տակաւին զգայ զխօս և գարտասանութիւն իւր . զի ասէ ունէր զսէր Առաջնորդի և Հայ Հասարակութեան քաղաքիս յինքն . սպա չասէ գողացեալ կամ բռնաբարեալ զայնս , թէ արժանաւորութեամբ և պատուով կրօնասիրութեան յինքն անգուցեալ , որ ամենաբաւական ապացոյց ճանաչի բառեղաութեան ատն : Այժ ունէր նա զսեռն սէր ժողովրդեան յինքն յանգուցեալ , (և նովաւ բազմօք սրահ սրանեալ զգատիւ վանաց և վանականաց) , որպէս և այժմէն նոյնութեամբ ունի ի սեպհական և երախտագէտ անձանց պատուաւորաց քաղաքիս , մինչ երկիցս և երկցս հանդերձեալ նորա լքանել զթեմն և զքաղաքս և զառնալ ի Չուղաց նախ քան զժամանակս , չէր գտեալ արձակութիւն ի Հասարակութենէ , ի մեծուէ ասեմ ցփոքունս , որպէս նուազ առ նուազ խնդրազիր նոցին յինքըն՝ վկայեն . և այն իսկ թո՛ր զժովասէս առիթն նախանձու տէր Մարտիրոսի . որ ջանայր ընկեցիկ զնա առնել ի պատուոյ և ի սիրոյ ժողովրդեան . որպէս յիւրում տեղւոջ ի ստորեւ ապացուցից :

Ասէ , տուաւ նմա արտօնութիւն աւագերիցութեան , փոխանորդականի և գաւազանակրութեան . խնդրի ասել զի աւագերիցութիւն նորա տուեալ և հաստատեալ էր նախկին Առաջնորդաւ և խրովարժանաւորութեամբ , բազմօք յառաջ քան զմուտ արդի Առաջնորդին ի Չուղաց (որպէս և խնդիր հայրապետական խաչապարգևին , նովաւ իսկ ի վաղուց կանխեալ յատեան հոգեւոյս սրբազան Յովհաննու հայրապետի , և որոյ օրհասն անգործունեայ զխնդիրն թողեալ . (յայտ՛ վկայէ խորհրդարան որոյ Էջմիածնի) , որպէս խոստովանի անդրանիկ զրութիւն նորին սրբազան Առաջնորդի առ Աւագերէցն վաղ քաջ քան կարգաւոյ նորա զգրութիւն ինչ ի նմանէ . զի

եթէ չէր նա տակաւին աւագերէց , ասոյս ո՛րեքն կեղծաւորեցաւ Առաջնորդն առ նովա՛ գրելով զնա աւագերէց : Եւ մանաւանդ՝ թէ կորզեցաւ աւագերէց , չի վրիպեցաւ բնաւին ի պաշտօնն առ բերելոյ զամօթ և զսորջանս ինչ իրաւացի առ տուիչ պաշտօնին :

Ի սակի փոխանորդութեան , կարեմք ապացոյցանել , (որպէս և դէմք զբութեան հեղինակին զնոյն անբռնադատ լինել քարոզէ) , թէ Առաջնորդն յօգուտ իւր ընտրեալ զնա պիտակ անուամբ փոխանորդ իւր(Յ) . որպէս և հեռատեսութիւն աւագերիցու վնասակար պատուոյն և չափու համարեալ , ի սկզբան հրաժարեալ և ի վերջոյ տոխամամբ հարկի յանձն առեալ և պարզապէս յայտնեալ Առաջնորդին , յորմէ և ընթերցեալ զշնորհակալութիւն յոյժ գրչաւ նորին խկ զրախօս հեղինակի : Թո՛ղ շնորհարարեալ ընթերցցի զսրտօճէնս նամակաց Սրբազանին թուեալ ի 6 Մարտի 1856 ամին : Նա թէ փոխանորդական մեծարանս զի՞չ փառք նմա քան նախատինս յա-

(Յ)Պաշտօն իմն երեւելի՛ կայանայ վաւերութեամբ եւ ոչ լոկ անուանակոչութեամբ : Առաջնորդն յատկացեալ կոնգակաւ եւ կնքով ջեր հաստատեալ զնա փոխանորդ . ուստի եւ նա ջկարէր վարել զնոյն պաշտօն ըստ հարկին . ապացոյց սորին է ի հնուստ սահմանեալ պաշտօն եկեղեցականին Կայկարայու ի դիմաց Առաջնորդին ստանալ զպսակահաս (մօհրանայ) յամուսնացողէ եւ գրել հրաման քահանայի ի պսակել զնա . որպէս յառաջ Աւագերիցուն եւ այսր ընթանայ զկարգն ընդդէմ փոխանորդական նախապատուոյն . զորմէ արժան էր Առաջնորդին զգալ եւ ճշ փոխանորդին . ո՞ր մնայ փոխանորդն կողմնակի յայտնեալ նմա եւ խնդրեալ այլ իմն միջոցաւ գրութիւն մի առ նոյն օրինակատարս նորա , կամ լաւ եւս է ասել նախանձանորաց մերձակայից յայլ իմն վերաբերեալ խոր-

որօրինաւորք կառավարութենէ վանացն և առիթ զրգոման գումշոյն նախանձաւորի , որ չկարէ տեսանել զոք ի տեղին պատուաւոր կամ խմաստուն քան զինքն . ոյր վասն և խաւար պահեալ զհայ գրականութիւն քաղաքին հաւատացելոյ յինքն զառնախնեօք . թողում և զայն , որոյ ի պատճառս առթաւորեալ ոմանց ընդ նմա մախանօք սակս անտեղի պաշտպանութեան և ծածկելոյ զվասս վանականաց ասելով յայտնապէս թէ հի՞ման համաձայն մեղ հակառակ ելեր , յորժամ զԱռաջնորդն երկիցս բացասել ի վանաց խորհրդածեցար :

Ի մասին գաւազանակրութեան չտեսանեմք վայելչութիւն ինչ շնորհի և պարծանաց . զի տուաւ յԱստուծոյ գաւազան Մովսիսի և յաջորդ հովուապետաց ի հովուել զբանաւոր խաչինս տանն Իսրայէլի , և որով արածել զնոսս ի վայրի դալարեօջ հին և նոր կտակարանաց . մանաւանդ զօրութիւնք նոյին չէր ի նիւթական գաւազանի (կամ Փալհուան Հօսէն Գառուղայի) այլ ի խորհրդական յերկնածորան և Աստուածարանական ազգու բանս քա-

հուրդ՝ ապարդիւն բողիւն . յոյր ընդդեմ հարցանի այժմ քե զինք վնաս յայնմ՝ քան բագմապատիկ օգտին վանաց . որպէս օրինակաւ ցուցից զմին կորուստ մեծ . զի եքե այնպիսի վաւերացեալ կարօղագիր իմն ի վանաց տուեալ լինիցէր նմա , ո՞չ ապաքէն նովաւ ի ժամանակի անդ իւրում ջանայր նա ի հանել զմին հարիւր հազար ոռփիւս , աւանդեալ ի բարեպաշտ տիկնոջէն Կոռնել Յակոբ Պետրոսի , հաւասար բաժանմամբ ջորից սրբազան տեղեաց , այն է Էջմիածին , Երուսաղեմ , Ամենափրկչեան վանք եւ կուսանոցն Ջուղայու , քան զոր անխնամ ջբացաւ , որչափ եւ կեանք կորբանակապուտ որդւոյն սրախողխող մահուամբ . զի յայտնի է զօձին փուշ՝ Արսէնն միայն մարսել կարող է :



բողից, սրտառուչ և հոգեչարժ մերասպէս տգէտ անու-  
սից, որպէս չպարծխմ ասել, թէ աւագերիցուն բազմեր  
վճարեալ լի ամենաբաւական դաւադանաւ շնորհացն  
Աստուծոյ . յոյր ընդդէմ և ոմանք յաներկիւղից (եթէ չէ  
օրէն ասել ի Սաղուկիցոյ ժամանակիս) ընկալեալ զնա-  
խատինս առ Աստուած ընդդէմ գնացան չխնդացին յո-  
գուտ հոգւոց իւրեանց և չմարթացան ի ժամուն առնուլ  
զվրէժն անխաւի . զոր այսօր առնել ժաման, պատ-  
րաստելով զորդունս անմեռ՝ կերակուր անշէջ հրոյն գե-  
հնոյն . (որոց անուանքն ընդ ապացուցութեամբք զոր-  
ծոց՝ գէթ ի ժամանակի, ի լոյս ցնդեացին առ պարծանս  
արդի իրոխտանաց նոցին : Եւ մանաւանդ երբ ընկալաւ  
նա զգաւազանն, հաղիւ վարէր ի գործս, և այն խկ  
հարկադրանօք ստորին քահանայից՝ մինչ յատենարա-  
նելն ածէին առ նա :

Յաղագս նշանաւորեալ շքանշանաց, չկարէ որ ասել  
թէ նամակաւ և հաճութեամբ յանձն է առեալ զայնս և  
կամ զործեալ ինչ ներհակ պատուոյ նոցին, կամ ոչ  
փոխարինեալ զշնորհակալութիւնս և կամ զփոխադարձ  
պատասհարկութիւնս իւր առ տուողն շնորհի, զորոց թէ-  
պէտ չէ անդէտ հեղինակն, թո՛ղ ևս վերստին տեսցէ  
զարտձէնս սրբազան Հօրն խբով զբշաւ առ Աւագերէցն  
ի 1855 ամի Նոյեմբեր 28 :

«Գուք թէպէտ ըստ խոնորհութեան ձերոյ յայտ առ-  
նէք զանարժանութիւն ձեր սակս խաչընկալութեան  
պարդելին, սակայն մեր խկապէս արժանի համարեցաք  
զձեզ հայրապետական պարդելի, ըստորում ծառն ի  
պողոյ անտի ծանուցեալ եղև ևսցին» : (6)

(6) Երէ ծառն ծանուցեալ բարի, զինքդ պտուղն  
դուռն, երէ ոչ բուհադրեալ արտաքին եւ ներքին  
բշնամեօք



վաղորհմն զղացեալ, ի վորձոյ, աւագ՝ բիցուն, աւեր (որպէս յաւորս իսկ բնկալման սրարգեին ի բնմրասացո թեան յեկեղեցին) թէ բնաւքս այսորիկ ստուեր սուաքինութեան՝ վտանգ թակարդեն իսկապէս պատուոյ և հոգւոյ անձին: Արդարև եղին զոր մարդարէացաւ և սակր միշտ, թո՛ղ զայն, որ զսրարգեն չկրէր ի հասարակի, այլ քանիցս ի տարւոջ, յաւորս նշանաւորս. խմն Ջրորհնեայ, Չաստի, ի տօնի հոգելոյս Ներսիսի, օգոստափառ կայսեր և Պաղէոս եպիսկոպոսի, ի պատիւ երախտեայն և վասն օրհնելոյ զգարգեատուան. այլ թէ նմանիք հանապազօր կրեցին և կրին զայնս ի լանջի և հեծեալ ի ձի ձօձնն յայս կոյս և յայն կոյս ի հրապարակի փոշոցայ, տալով տանել ի ձեռն սարկաւազայ առաջի և զգաւազանն, ըստ օրինակի տէր Մարտիրոս հարազատին, այն յատուկ է շնորհ վարչութեան ի Չուզայ:

Խօսի հեղինակն զճոխութենէ իրրև յեան կրից. (7) այլ չառնէ սրաշումն թէ ո՛չ ամեներումբ, որոց կիրք սրեալ է յեանսու շնորհաց պատուիրանայն Սատուծոյ և ունեցեալ են միշտ զճոխութիւն քրտնաշխատ, այլ յակնարկել պարտ էր յաւետ յինքն, որ ըստ երբևմնախան զրութեան ի բոյ կարօտ և մերկ, թէ և այսօր յանկարծուստ յաջողմամբ կոյր բազդի, վերացեալ ի հեղեղուկ փառս ճոխութեան, ասուեայ մեծագին զօտին և անգալմանդեայ ծանրագին մատանին ընդ մէջ և ի մատն կրելով և զտունն՝ իրրև սրղատի ի շխանաւորաց, ճոխա

---

(7) Սոյն այս հոմբաւ պիտակ ճոխութեանն էր, որ բմբեցոյց գաջս հեռաւորաց եւ մերձաւորաց վատակամից, եւ խքան եղեայ ոմանց քչնամուքիւն հոգեկործան. մինչ էրէ ուներ եւս՝ առաքինի վաստակոց եւ քրտանց էր պտուղ եւ ոջ ըստ ոմանց կողոպտմանց:

ցուցեալ ամենայն զարդուք և շքեղութեամբ և յերկիւղէ անկմանն անդբէն ի վիճակ դառն առաջին, ճիզն թափէ մեռուցունել զայլս և կենդանի ունել զինքն: Ահա այս է յեսանն, սրիչ գրչի և կրից հեղինակին. զորմէ խօսի փորձիւ վիճակին. «Թէ ո՛չ՝ աւագերէցն բաւականին ճոխացեալ էր ի վաղնջուց և այնու իսկ մտեալ ի քաղաքս՝ զտուն և զկարասիս տանն Չուղայու՝ ապսպարեալ տէր Մարտիրոս կարծեցեալ բարեկամէն. ուստի եթէ խցիւ նորա ունակութեամբն պաշարեալ, ի սղղբաննէ չկարէր խոնարհութեան և կրօնի սքեմին ընդունակ աշակերտել, ընտրելով միշտ որպէս և այժմ՝ զմաքոր և զհասարակի կեանս. և ոչ բոստ թմանց՝ սլճնասիրութեան ցանկացող զինքն փառաւորելոյ յաչս տեսողաց (որ ընդդէմ ճոխութեան համարի յեսան վատնողութեան), զորմէ թո՛ղ այլք վկայեսցեն. մանաւանդ թէ սլճնասիրութիւն նորին չէ՛ լեալ միշտ օգուտն հասարակաց: Ահա օրինակ քեզ՝ յերկեանն գործ. տալ բերելն յԱնգղիոյ մեծագին և պատուական ժամացոյց վասն Չուղայու վանաց, և մինչ ընթերցեալ յԱռաջնորդէն թէ վտանգաւոր էր վտան տեղւոյն, և թէ բարեգոյն էր նորին արժէիւք տալ փոքրել անդ զստորերկրեայ խողովակն ջրբուղիսից (քարեղք), լի տրտմութեամբ զժամացոյցն վաճառէ կրկին, (8) և մինչ խորհի զհանդերձանս հօրն կատարել, հասանէ յիւր վերայ պատուհաս հալածմանն:

Ի խոնարհագիրն թէ «Տուն, կին և զաւակունքն սանձ դնեն կրից մարդոյ վասն ոչ ընդարձակ արշաւելոյ յաս-

---

(8) Գնեցաւ ժամացոյցն վասն Դարու եկեղեցւոյ. ուր այժմ ի պարծանս ժողովրդեան եւ ի խնդութիւն մեր կ'սնգնէ այ ի գանգ ս'լաւոսն, փսոսարե գեղեղեցիմ եւ բաշխե օգուտ կարօտաւորաց:

պարէզ կամնապաշտութեան և այլն<sup>21</sup> : Առ այս ասեմք, որք զայսպիսի խոհան, բացակայ լինին յերկիւղէ պատժոյ և արդար վրէժխնդրութեանն Աստուծոյ, զի ուր չիք սանձ պատուիրանի շնորհաց, անդէ և տեսանել զգազանութիւն կատաղի, որում ո՛չ կլին և ո՛չ զաւակունք բաւեն ի դիմի նալ, որպէս բազում անգամ պատահեալ իսկ և իսկ անպարտ զոհումն կնոջ և զուսկաց՝ անիրաւութեամբ առն : Թերևս կամք էր հեղինակին ասել զոր այլ ընդ այլով ծածկէ, եթէ աւագերէցն կնու և զաւակօք կապեալ իցէր ընդ Չուղայու, ըստ այլոց ոմանց, յորոց ընկալաք զիր նգովից ի չխտակոյ լնչ ընդդէմ՝ առնէր և նա սյնալէս որպէս գերի մեր. և միթէ սոյն այս սարսուռ երկիւղի չէ՞ր, որ տոխակաց ոմանց ընդդէմ ճշմարտ և գրաւոր խոստովանութեանց յետս ի փոխած իւրեանց դառնալ. և այս իսկ վիհ երկիւղի էր, որ զաղքատքս հիւրանոցի ազգիս սարսեցոյց ստիպմամբ ի ձեռնագրութիւն բողոքազրոյն ներհակ կոչման, զի եթէ ոչ գրիցէք, ասէ, զգերդաստանս ձեր լկինն ի Չուղայ, թո՛ղ զայն, որ ոմանք օտարականք և անկախք Չուղայու, որոց 22 սուխի տալովառլին զստորագրութիւն և զանուանըս նոցին ի յաւելորդութիւն ձայնի : Նաև սոյն այս տագնապ երկիւղի էր, որ ետ յօրինել զկեղծապատում ինքնագով գրեանա ի Չուղայ ստորագրութեամբ բազմաց և առաքել մեզ այսր՝ ի ստեղ զճշմարտութիւն. որպէս ոմանք զկնի յայտնեցին զհանդամանս լինելութեան և զստորագրութիւն իւրեանց յերկիւղէ և ակամայ պարտաւորութեամբ, որպէս ունիմք ապացոյցն ի ձեռին :

Առ այն թէ, «Որչափ ի փառս և ի պատիւ վերաժամանեալ ի յառաջադիմութիւն նկրտէր, այնչափ և մեծանայր և աճէր զառնութիւն սրտի նորա յապագայս

մի որ քաջանայի(9) միայն յամենայն ի փառս, ի սրտիւս, յարտօնութիւնս լինելոյ զուգարայլ և հաւասարակից ընդ ինքեան, նոյն քաջանայն էր տէր Մարտիրոս տէր Յովակիմեան . . . որ յամի 1845 ցՅ9 ի ներքոյ իշխանութեան իւրոյ եղեալ էր ստորադաս վիճակաւոր քաջանայ Ապրիլթու ևայլն”:

Պատասխան շաղակրատանացն խոյնն ընկալնու ի ստորև յառաջեկելի բանիւք և նորօք հերքին փաստք յերիւրանայն առանց ստորագրութեան յատուկ բանից:

Ի կեղծն թէ, «Յորժամ վիճակաւորեցաւ . . . . Թագէոս արքեպիսկոպոս՝ Առաջնորդ ի Զուղայ . . . ականառես ևր տէր Մարտիրոսին, իսկ միւսոյն զանուն միայն լուեալ էր: Աւագ քաջանայն Ապրիլթու ունէր և կալաւ զսերտ բարեկամութիւն ընդ տէր Մարտիրոսին, որ ծանօթացոյց զնա Առաջնորդին որպէս մարդ զործունեայ, կարող առնելոյ զմեծամեծս յօգուտ ազգի ևայլն”:

Յնորք այսմիք սլարրերութեան ևայլն, թէպէտ միանգամայն օտար ի ճշմարտութեանց և զբաւոր խոստովանութեանց նորին Արքազանի առ Աւագերէցն, թէ ուստի և որով ծանեաւ զնա զոլ և լինիլ անգամ պիտանի և բազմարդիւն՝ վանայ և ազգին, սակայն մեր զառաւելագոյնն աստ առնումք ի կէր, հաւաստելոյ զհաւաստիւթէ ի վիճակաւորիւ սրբազան Թագէոս եպիսկոպոսի ի Զուղայ կարօտ ամենայն նպատից, այ՛ կալեալ զըրօշակս հանդերձից երկուց քաջանայից տէր Բարսղի և տէր

(9) Ուրանայն զփեսայութիւն տէր Մարտիրոսի, օգուտ համարէ ի ջատագովութեան իւրում, զի մի բերեցոյք իրական պատճառս առնուցուն ի շնորհուկն հարկադիր ստիպանաց սիրոյ բեռն. առ որ իրանանամբ օրինակաս յարմարել, բէ բազմութիւն բնտանեաց քաջ նիգակակից առն:

Մարտիրոսի , ըստորում նորադարձ էին ի մեծաշահութեամբ մայրաքաղաքիս , շնորհիւ ժողովրդոցս և կարեկցութեամբ աւագերիցուն լի որայուք և սպասուով . նորա ևս աշխոյժ՝ փառասէր և ցանկացող նախադասութեան ի համօրէն քահանայա ջուղայու , պիտեանութիւն և իղձերկոցունց ողջունեալ միմեանց , ծնան զսերկեանս հրաշայլս աղգիս . ոյր սակս սկանին առաջի և ի լսելիս Հօրն զմեծամեծս ի Հնդկաստանայ յոյս դրոշմել և զաւագերէցն իբրև շնաշխարհիկ և անզուգական ոմն փառաց ի փառս բարձրացուցանել , յարարերելով և ի նմին թէ մեծագործ և գերահամբաւ այրս այս սիրէ զմեզ իբրև որդի և լի հաւատով ընդ մեզ կայ սիրով , և զոր մեքս զրեմք նմա , անշուշտ հաւատայ և նա(10) : Ուստի ակնկալու առաքիճանաւս այսուիկ սկանին բարձրանալ և բարձրացուցանել , որպէս և զրեն զԱռաջնորդէն բազում ինչ առ աւագերէցն . և նորա ստիպեալ ի ճշմարիտ բարեկամութենէ , զրէ երբեմն առ Առաջնորդն ունել զնոսս ի

(10) Տարաբաղդապէս իրօք հաւատացեալ անագերիցուն նոցա , մանաւանդ տեր Մարտիրոսին ի ձեռն կեղծ գրութեանց եւ ածականաց նորին , «Իմ հայր , իմ բարեբար , իմ պաշտպան , իմ խնամածու , իմ բերկրութիւն սրտի , իմ պարծանք՝ , եւայն , զորս քե ի մի ժողովեալ՝ ընդ ջափու Սաղմոսաց անցանէ . եւ ի նմին ժամանակի մեռեալ որդւոյն Անագերիցուն ՚ի Ջուղայ եւ տրտմութեամբ վարակեալ զսիրտ նորա , գրէ եւ յայտ առնէ ի Ջուղայ , ոչ ոք գրէյ ինքեան ըզգիր , ընզդէմ ազգի ազգի առբերեալ նեղութեանց միմիայն հաւատացեալ տեր Մարտիրոսին , որում եւ յանձն արարեալ գտուն եւ զստացուածս իւր ի Ջուղայ՝ որ եղեալ նմա ծայրագոյն առիթ հաւատոյ եւ պարծանաց առ Առաջնորդն :

յարգի խորհրդոց . և այսպէս բողոճանք երկուց եզերաց՝  
 յիւրաքանչիւր օգուտ , յաջողին փառօր ի փառս վեր-  
 ձեմել , մինչ գերացեալ , սուտարացեալ և լայնացեալ  
 նոցա , նիւթեցին զհնարս թագաւորեւոյ իշխանութեամբ  
 ի վերայ վանաց , Սոաջնորդի և Զուղայու : Բայց լինե-  
 լով երկու և կէս վարդապետք Սթոն՝ երրեմն հակա-  
 ոսկող ինքեանց , հոգացին նախ աքսորել զնոսա ի տեղիս  
 տեղիս . զՊէորդ վարդապետն Մկրտչեան՝ յԷջմիածին ,  
 զՅովհան վարդապետն՝ յետ ամօրեաց արգելանաց ի  
 խցի , ի Բուրվարի գիւղ . և զՍնդրէաս վարդապետն  
 իրբև գերի ի ներքոյ հրամանաց և ճնշանաց , մինչ կար-  
 ձին և կեանք նորա . . . : Թողումք զՅովհաննէս վար-  
 դապետն , որ ի վերջոյ հրաւիրմամբ Սոաջնորդի եկեալ  
 յԷջմիածնայ որպէս միաբան վանաց և անդստին յետ  
 դարձեալ իրբև յուսահատ և ինքնահալած , գրահանայս  
 Զուղայու և գիւղօրէից ի խիտ ճնշանս խոշտանգելով  
 (յորոց ասի , երկուք ընդ գիշերայն ծպտեալ ի կալանա-  
 ւորութենէ և յարգելանաց դռնոց ուղտու և վտանգա-  
 ւորեալ զանձինս իւրեանց դահալիւթմամբ ի բարձր տան-  
 եաց առ լոռոցն Ղարաչօմախ ասացեալ , զիմեն ի տուն  
 Իմալջօմոյ դենպիտի . . . . մինչ յառաւօտու ելեալ՝ տէր  
 Բարսղի ի վերակոչում և ի համողումն) . և յետ ամենայ-  
 նի՝ խորին խորհուրդ վասն ընկճման և աւագերիցուն  
 Աղալիաթու , բարերարին իւրեանց , ոստայնակելով զյօ-  
 բինուածս զժոխսագործ , թէ Սոաջնորդս թէպէտ ընդ  
 բումբ մերով ընկճեալ , այլ ունի որդի մի և՛ սիրական և  
 հաւատարիմ՝ ըստ ամենայնի ի հեռաւոր վայրս , որ զի-  
 մադրէ և մեզ պէսպէս բարոյականութեամբ . արդ եկա՛յք  
 սպանցուք և զնա և կալցուք զժառանգութիւն նորս  
 տիրապէս :

Յամին 1855 խորհրդածեն յարուցանել նուիրակ ի

Հնդկաստան , բայց չածեն զմտա՝ թէ յերկէ հասարակութիւն Արկարթու , լի նախատանօք և անսպասուարար զգրութիւն մեր յերես մեր դարձոյց և սիրտ նոցա լցեալ ցաւօք յուսահատութեան , զլա՛րդ մարթ է նոցա ընծայաբերել մեզ տուրս զուարթս և առատս , առաքեն ըզկոնդակ նուիրակութեան առ աւագերէցն զործակցութեամբ եկեղեցականն . յորմէ հրաժարեալ նորա զբաւոր բացասացութեամբ , թէ ինքն չունի յօժարութիւն մտանելոյ ընդ խնդրով և զործով Առաջնորդին . առ որ՛մնաց Աւագերէցն միայն , և շուարեալ ի խնդիրն (զորմէ վաղքաջ հրաժարեալ յայտնեալէր կառավարութեան վանացն , յարձարձիլ հանդերձանաց զործոյ նուիրակութեան , զինքն ոչ ենթակայել ի պաշտօնն նուիրակութեան) զի տեսանէ զսիրտ ժողովրդոց վշտացեալ և զսէր նոցին առ վանքն և առ Առաջնորդն նուագեալ , եկեղեցական՝ իրրեւ եկեղեցարան և զործակից ի բաց հրաժարեալ , կամբ և հաճոյք Առաջնորդի և խորհրդականացն ի դանձումն զակատեալ , փող ու փող քարոզեն(11) առանց ո՛ր և իցէ իրաւունք լսելոյ և չար քան զամենն զգածումն ի խորհրդականաց անտի վանաց առ ընկալեալ թէ լի մախանօք նկրտեն թակարդ իմն վնասու վտան խրոյ ինքեան յարուցանել :

Խոհական անտեսութեամբ և կարեկցական սիրով զանցս ամենայն զժուարութեանց դրէ և ծանուցանէ Առաջնորդին , թէ բարեղոյն էր առ ժամանակ մի զկայ զգործն ունեւ , մինչ կարդալ ինչ նոր , և կամ ընտրել շաւիղ իմն ազրահով , անվնաս և արդիւնաւոր , չխմանալով թէ փոխութեամբ ժամանակի , սակաւիկ մի փոխելոյ

(11) Ամենայն դառն մրուր ծագի եւ քանձրանայ յանյազ փողապաշտութենէ եւ որով իսկապէս տեղի ընկայեալ ցաւալի պատահարք :

էր զեզանակ դժուարութեանց ի կողմն յաջողութեանց  
այն է հանդերձանք եկեղեցականի յամուսնութիւն . որոյ  
ի դիմելն առ Աւագերէց , նա զառաջին խնդիր պաղա-  
տանաց առ եկեղեցականն ասէ ի մասին ինքնայօժար լի-  
նելոյ յառաջ ասման գործոյ նուիրակութեանն : Ուստի  
և սոխակալ նորա ի սիրոյ և ի պարագայից անտի հան-  
դերձանացն , ուխտէ յանձն առնուլ լոկ ի պատիւ խնդ-  
րոյ աւագերիցուն . և նորա շնորհակալ լեալ յառաջացու-  
ցանէ զգործն և շքարեղենն զգիր տրոցն ի հասարակու-  
թեան : Գրէ և աւագերէցն (արտաքոյ Բթալիոյ) ամե-  
նայն ուրեք ի վիճակս Հնդկաստանի միջնորդութեամբ  
թեմակալ քահանայից . և կոչէ զտուրս տեղեացն ի լրու-  
թիւն գործոցն . զրէ և զանեօրս եպիսկոպոսին խնդցն ,  
յուսալով թէ ունէր այնու ևս քան զևս շահել զկամս նո-  
րին , և այսպէս զոգջի՛ր յանգ ելեալ գործոցն , ընթեո-  
նու Աւագերէցն զգրութիւն մի ՚ի Սրբազանէ , իրր պա-  
տասխանի նախկին գրութեանն . որով պատուիրի ըստ  
գրեցելոյն զկայ ունել զգործն . և թէ անդատին յառաջա-  
ցուցեալ պահել ի նոյն դրութեան յորում կայր , ստանց  
շիշատակելոյ ինչ թէ ունէր առաքել զոր կրկնանուիրակ-  
ութիւն և նա՛ ըստ հրամանին , զգործ նուիրակութեան  
Բթալիոյ քաղաքի և սահմանացն զոր հանդերձեալն էր  
վճարել միջնորդութեամբ հանդուցեալ պարոն Նդիսազար  
Գ . Գատպար բարեկրամին , (որ առժամանակաւն վասն  
իրիք գործոյ ի Բթալիոյ եկեալն էր ի Ապկաթայ ,) զկայ  
պահէ . և ի սմին վայրի՛ լի յեզակարծ ելն տէր Մարտի-  
րոսի իրր կրկնանուիրակ Հնդկաստանի , որ զոգջի՛ր ըստ  
կլիցն Խորայէլի ցուպ ի ձեռին անասարէր ի չու , (առ ի  
խառնակել զրարոյսմանութիւնս քաղմաց) զայ հասանէ ի  
Բուչն . ուրանօր ընթեոնու զաւարտումն գործոցն . ըն-  
թերցեալ և սրբազան Առաջնորդի զերկրորդ գրութիւն

աւագերիցուն ի Չուզայ , և այսպէս զխոռութեամբ վերստին կրկնանուիրակն հանդերձի նաւել ի Հնդկիս :

Հասեալ ի Մասկաթ , գտանէ անդ զտէր Մկրտիչ Յ . տէր Ղուկասեան , որ ի վիճակաւորութեան Ապրիլթու վերադառնայր ի հայրենիսն . մանրամասն տեղեկութեամբ ընդունի անդ և ի նմանէ զանցս անցից և զկատարմանէ գործոյն տիրաբար , և գայ հասանէ ի Բուսրայի : Յանդուստ գրեալ գիր մի առ Աւագերէցն , յայանկող զանծանօթ ելս իւր՝ նպատակաւ պաշտօնին , խնդրելով խորհուրդ և շաւիղ իմն պատուաւոր առ պատահարն : Պնէ և նա առաջի նորա խորհուրդ չուեցման ի Չաւա , որ յատուկ է սահմանաւ և իշխանութեամբ Հնդկաստանի , որպէս թէ նշանաւորեալ նուիրակ տնդոյն . առ որ զուարճացեալ նորա՝ հաւանական խորհրդով խնդրէ և արտօնութիւն աւարտելոյ զնուիրակութիւն Բուսրայու , որ մի միայն՝ պատճառաւ հրամանի Առաջնորդին , մնացեալ մնայր : Պրէ և ըստ խնդրոյն , յայտարարութիւն առ և կեղեցական տեղոյն և յանձն առնէ զիրաւունս գործոյն կրկնանուիրակին . որպէս և նորա յամբողջ ածէ :

Յետ որոյ յաւելու գրել առ Աւագերէցն զառաջադրութիւն զալոյ ի Ապրիլթա , ուր ասէ բան շատ ունիմ . որոց մինն է այցելութիւն ազա Յովհաննէան բարերարին իւրոյ և սնուցչի (12) , և մինն՝ մեծաբանակ փո-

(12) Բարերարին՝, ասէ , ՚ի պատճառս տածողականի խնամոցն նորա յինքն ի մանկական տիոց անտի . զի հայր նորա ի վիճակաւորիցն ի Պիւնանց քաղաք , ածէ զնա քնդ իւր անդ . ուստի եւ առանց ինչ հարցօփութի առաքէ ի Կալկաթա առ քարեպաշտն . եւ նա ըստ բնաբոյս բարուցն տօնելի ազգասիրութեան , ընկալնու ի լանջ խմամոցն , մուծանէ զնա ի դպրոց եւ տայ մարդանալ . (Էրէ ըստ արդի գնացիցն վայել է զնա

խանակազիր վանսայ ի վերայ կառավարչաց եկեղեցւոց  
 աստի յաջողակ իւր , զորմէ խնդրէ յորդոր լինել հա-  
 տուցմանն , և զայնմանէ ծանօթս տայ յիշեալ Աղային :  
 Եւ այսպէս հասնալ սրտտուելոյն ի Վալիաթա՝ ամենապա-  
 տիւ մեծարանօք ընկալեալ լինի յԱւագերէցէն , ո՛չ մի-  
 այն ի վերայ արտօնութեան սրաշտօնին , այլև յաւէտ  
 սիրով հայրենականին , որով նախապէս ունէր ընկալեալ  
 ի ժամանակս նախկին վիճակաւորութեան նորա ի թե-  
 մին . մանաւանդ և զկնի ցայնժամ զորդիական ձայն ի  
 նմանէ լուեալ , թէ և նշանախեցիս , ներհակականօք ըզ-  
 գացեալ նորա զանդրադարձ վարկումն , առ ոչինչ հա-  
 մարեալ մնայ անխորտիս ի սէր իւր :

Հաննալ զփոխանակազիրն՝ ստանայ անաշխատ զգու-  
 մարն (որ նախապատրաստեալն էր յորդորմամբ Աւա-  
 գերիցուն) և սկսանի զաղաղակն՝ թէ ինքն ի գաւազա-  
 նապտոզոյ նուիրակութեան քաղաքիս զրկեալ , պարտա-  
 ւորէ զԱւագերէցն թոյլտողրել ինքեան իրաւամբն վարկ-

մարդ անուանել) . որոյ էս յետ դարձին ի Ջուղայ էս  
 քահանայական պաշտօնիս ի վերադարձին երկրորդ  
 անգամ ի Կալկարա , ըստ ջափոս ընդունի շնորն է-  
 րախտեաց . որով էս ո՛չ միայն շահասիրեալ անդէն ի  
 նմանէ առ ժամանակահան , այլև յետ վերադարձին ի  
 Ջուղայ , որպէս քանիցս , յորդորմամբ նորին Աւագե-  
 րիցոս , տայ բաշխէ նմա գտուրս սոռատ . ի միում  
 նուագի մին հագար Կումբանիոյ Եռնիս , ի միւսում  
 300 էս այլովք յիսնականաւ էսայլն . ուստի այցելու-  
 քիւն նորա վերջին պիտակ անուամբ , բարերարու-  
 քիւնն հայեր յիւրն անձնական օգուտ . որպէս էս ի  
 վերջոյ յայտնեալ , ըստ մասին անպտուղ եղէ . ըստ  
 որում վարք էս բարք ստացողին օտար ի բնականէ ,  
 անհաճ բարերարին :

պարագի , ընդդէմ վեհանձնութեան սրտուոյ մանածել  
ի հասարակութեան , թուղթ մի նպատաւորութեան .  
որպէս արարեալ քանի մի հարիւր Առմբանիոյ ուստիս  
չահաւիրի : Եւ ապա դիմեալ առ բարերար Աղայն ի  
խնդիր մեծի օգնականութեան , ո՛ր վասն վանաց , ո՛ր  
վասն կարօտաւորաց Չուղայու և ո՛ր յատուկ վասն իւր .  
(ղիւր անձնականն բերանով և ոչ ըստ միւսոց գրաւոր . )  
և այն յաւէտ հրամայարար ի ձեռն պիտի բային . որով  
խոժոռեալ Աղային , յանձն առնու և ոչ զմին : Ուստի  
պարտաւորեալ յայտնէ Աւագերիցուն զբանն , ցայն վայր  
ծածկեալ ի նմանէ , խնդրելով զմիջնորդական կարեկ-  
ցութիւն նորա ի խնդիրն , (զիտելով քաջ զհամարումն  
նորա մեծ առ բարերարն , որոյ բանին չէ չատէր նա .  
որպէս և երբեմն զրեալ առ Աւագերէցն , թէ՛ կամք Ա-  
ղային կապի ի մատուցսքո) , որպէս և նորա ամենայն սի-  
բով յանձն առեալ , յանուն և վասն ազբառաց Չուղայու  
երկու հազար Առմբանիոյ ուստիս խնդրանօք տալ տայ  
նմա . զոր այժմէն ի ներքոյ տէրութեան վաշխակիր մուր-  
հակաց աւանդեալ ի հաւատարիմ տեղիս , ամ ըստ ամէ  
առարի վաշխն ի ձեռս նորա առ ի բաժանել : (15)

Հուսկ բացեալ զպահանջն յԱւագերիցէն , թէ՛ տո՛ւր  
զհաշիւ և զումար նուիրակութեանդ . և նորա հաճեալ

---

(15) Կենդանութիւն նորին Աղայի , մասամբ իւրիք  
պարծանք եւ ամբութիւն էր պատուոյ եւ կեցից Աւա-  
գերիցուն , առ նորօք որք ակնկալէին շնորհաց նորին .  
զի ում ոչ յաջողէր առանձին խնդրուածովք՝ յաջողէր  
միջնորդութեամբ Աւագերիցուն . որոյ պակասիցն եւ  
բարձումն շնորհաց հասարակի , բարձաւ եւ սնտի  
պատիւ նոցունց առ Աւագերէցն , մանաւանդ ի վա-  
նականաց եւ յերախտագէտ տէր Մարտիրոսէն :

ի հաշուետուութիւն այլ ոչ ի վճար ձեռեկեալ զբանոց .  
 զի սաէ չկարէ առնել զայն առանց պատուիրանի . Ընդ  
 որ դժկամակեալ իրաւասիրին սաէ , եթէ գիտէիր ո՞վ եմ  
 ես և ի՞նչ հզօր արտօնութեանց տէր , գո՛նէ չասէիր  
 զայդ բան . և խելոյն հանեալ անհասարակի կարողութեան  
 իմն գրութիւն ի սրբազան Առաջնորդէ ցուցանէ նմա .  
 յորում ասի գրեալն էր թէ Ընտրեցի զտէր Մարտիրոս՝  
 իմ պատկեր , իմ աչք , իմ ականջք , իմ բերան , իմ  
 լէզու , իմ բարբառ , իմ սիրտ . զի զոր ի՞նչ առնիցէ նա ,  
 որպէս ես եմ արարեալ և այլն : Ետ բարի , պատասխա-  
 նէ Աւագերէցն , չունիմ ես տարակուտութիւն ի հաւատ  
 այդմիկ . բայց չգրէ յատուկ վասն յասկացեալ գործոյս .  
 այլ եթէ տակաւին դու վաւերացուցեալ զպատուիրա-  
 նագրիդ օրինակն տայցես ինձ , անշուշտ հատուցից քեզ  
 զգրամն : Զէ՛ , չէ՛ սաէ , հարկ չէ . սպասիր զի ի փոքու  
 գտանելոց ես և զցանկալիդ գրութիւն : Եւ յետ սակաւ  
 աւուրց (որպէս կանխապատրաստ) յանձն առնէ Աւա-  
 գերիցուն զգրութիւն Առաջնորդին առ այն վախճան ,  
 թէ տուր զղուճար նուիրակութեան տէր Մարտիրոսին .  
 և նա առժամայն յանձն արարեալ ստանայ գտագիր և  
 աւարտէ գրանն :

Տէր Մարտիրոս անդրէն առ նա դարձուցեալ զգրամն  
 յիւր անուն և ստացեալ զստացագիր , պահիր , սաէ ,  
 առ քեզ աւանդ , մինչ լղրիցեմ քեզ ի Չառուց առնել  
 ինչ . որպէս և դրէ առաքել Առաջնորդին և առարի .  
 ապա և յետ լրացուցանելոյ զամենայն ի միջոցի սակաւ  
 աւուրց , պատեհ ընկալնու իրր որպէս բարեկամ յիշել  
 ընդ Աւագերիցուն թէ ձերութիւն քո և բազմամեայ վաս-  
 տակք թեմիս անառողջ բնութեամբ , ընդ որ իմ որդիա-  
 կան տէր առ քեզ , ստիպեն զիս խորհրդատուն քեզ , զի  
 թողցես զթեմիդ և մնացես յանդորրու յազատութեան .

մանաւանդ շնորհիւ Տեառն , կարօտաւոր չես . և թէ առնել բարեհաճիցես , կարես զրել ինձ հրաժարական իմն , նոյնպէս և մինն առ եկեղեցականն . ես կարեմ կարգաւորել զամենայն վասն քո ևայլն : Ընդ այս ժպտեալ նորա ասէ , չամուսայ տէ՛ր Մարտիրոս , մինչ ի հանգստարանէ կոչումն ընկալայ . չամաչեցա՞ր դու ընդ խօսոյ չափազանց . որով կոր ի գլուխ եղեալ նորա , յետ երկուց աւուրց ելանէ ի Ձիչրայ իբր զբօսանք , և այցելութիւն վիճակաւորին տեղւոյն . ուր և խաւար մթութեամբ զբէսաւ Սուաջնորդն այսուիկ օրինակաւ :

«Թուի նպատակ շիթութեան կողմանցս , մանաւանդ քաղաքիս , որչափ երևակարար համարէի այդր , այնչափ խելութեամբ տեսանի այժմ , զի թողեալ զբնական ազգատեցութիւնս մերայնոցն , ոխերիմ թշնամի հանդիսացեալ են ամենայն քինօք ընդդէմ աւագերիցուն իւրեանց . զի զոր ինչ ճանապարհաւ և հնարիւք զբաւեաց զսիրտ ամենեցուն յառաջնումն , այժմ՝ միանգամայն ներհակութեամբ , խստանօք և նախանձ ունելով երթայ . և լինելով օրէնք տեղւոյս խիտ , ոչ որ վստահանայ առ երեսս ընդդիմանալ նմա . զի կարող է ասել , քահանայ եմ , Աւագերէց , պատկեր Սուաջնորդի , զոր ինչ պարտիմ պարտաւորէ զիս առնել , զայն առնեմ . թէպէտ ըստ օրինաց արժան է առնել ստահակ ժողովրդոց զայն ամենայն զոր առնէ , բայց եթէ յառաջմանէ այնպէս առնէր , չունէր հասանել աստիճանին փառաց և հարստութեան . բայց այժմ ըստորում անկարօտ է յամենայնէ , մտրակէ զկամս իւր և հաճութիւն իւր թուլագրէ ինքեան . վասն այսորիկ ես զգիր ձեր ոչ ի լոյս ընծայեցի(14) , զի կարելի է , անդարմանելի խոտվութիւն ինչ յառնել . թէև մին

(14) Գրութիւնն ասի լինել ընկղիմ Աւագերիցուն , առ ի գլորել զնա եւ ինքն յաջորդել ի տեղի :


քանի անձանց յայտնեցի զրեւ ձեզ և հանել զաւեր Յովհաննէսն ի պաշտօնէն . քանզի և թէ դուք զրէք , յետոյ ինքեանք ունին անկանիլ ի կողմն քահանայի (15) . ուստի թողէք ինքեանք արասցին , և կարծեմ առնելոց են , և զտէր Յովհաննէս խայտառակութեամբ արտաբերոց յեկեղեցւոջ . . . : Ես ստիպեալ ի բարեկամութենէ , խորհրդատրեցի նմա հրաժարական մի զրեւ ինձ . . . . զոր թէպէտ կամք ետ , սակայն տեսանեմ առնելն զըմուռաճնայ . վերջապէս եթէ մնասցէ ատտ , առաջի նոցա ունելոց է զհամարումն , որչափ այլըր ունի տէր Միքայէլ . զի ասնն , սա քահանայ է և նա քահանայ է . բայց յետ այսու կարի վտար լինելոց է և չարաչար անկումն և զլուրումն նորա և այլն” : (16)

Մոյն այս սանդղարամետական զրութիւն , ի Չիչրոյ ուէջիստր արարեալ առաքէ ի Չուղայ , և դարձեալ ի Կալկաթա , առ ոտս նորին շողորթի սրպէս որդի կեղծաւոր և անհարազատ ընդ հօր , և նորա միամիտ և անտեղեակ զգործոյն թէ սառն թունաւորութեամբ թու-

(15) Զայսմանէ , ըստորում զիտէր գանգուածս ումանց խռովայուզաց . որք ըստ բնաւորութեանն սովորն էին միշտ վարել ներհակականօր , որպէս զարդիս պարգապէս ամենեցուն հաստատի . որք յերեկ որպէս վկայեալ պատուաւորք ազգի , այսօր ընդդէմ կարծեաց , խառն ընդ սինյիքորս գահավիժին ի խորխորատ գագնային կատաղութեան , ըստ յայտնի լուտանաց եւ գործոց :

(16) Զայսմանէ Աստուածընդդէմ գրուածոց չուրանայ հեղինակն իւրով իսկ Երկար բանակրճատ խստովանութեամբ առ հաւատարիմսն ի Կալկաթա , յաւելլով զղծոյսայինն ստուրիւն քե գրութիւնն կերպիւն միք բուճարեալ ի Կալկաթա , եւ ոչ գտեալ յայլմէ :

նաւորեալ էր զինքն , հաւատալով նմա՝ սկսանի ցուցա-  
 նել նմա զպտուղ սիրոյն գերբնականի . զարծաթեայ  
 լանջակիր խաչն փոխարկէ յոսկի , պարզեւէ նմա զպատ-  
 ուական մանուշակագոյն վերարկու և լողիկի ի ջուխայէ ,  
 սրծաթազլուխ քանդակագործ ընտիր զաւազան ընդ  
 այլևայլ արժանաւոր ընծայիւք վասն իւր , տայ բերել  
 մեծագին զառնաւուխտ ի Բնարխոյ , և ի Մատրասայ  
 ազնիւ թաշկինակս վասն ամուսնոյն (որում հարս նորա  
 հանապազ անուանէր) . սոյնպէս և այլ իրք վասն դստե-  
 րացն (զորոց , աւէր երախտագէտն , թէ թոռունք քո  
 են) , մինչ անգամ զՄիսօն ծառայն ևս ոչ թողեալ ան-  
 մասն ի պարզեայ ճրից , զորս ի մի սկտեղ իրբև օժիտ  
 400 Կօմբանու Ռուսոց առարէ ի սենեակ նորին . և մինչ  
 նորա յանակնկալ դէպն զարհուրեալ , մանաւանդ զու-  
 ցէ ի խզէն տուայտեալ , յսոնէ անձամբ ի շնորհակալու-  
 թիւն , կեղծաւորաբար թոթովի ի բանն . Հայր ասէ ,  
 չգտանեմ բառ ինչ պատշաճ առ սէր և շնորհ ձեր առ  
 իս , ձեզ ի փոխարինութիւն . որպէս և բնութիւնն թոյլ  
 չտայ խօսիլ ինչ , ուրեմն ընկա՛լ զիմ ի սրտէ զանրո-  
 վանդակելի շնորհակալութիւն , և հաւատայ ինձ ցվերջին  
 տուրեաւ հազագիս կեալ և մեռանիլ ձեզ անմտայ ,  
 երոխտագէտ և շնորհապարտ . և այսու ամենայնիւ  
 թողեալ գքաղաքն ելանէ ի Սինկափուր և անտի ի Բթա-  
 լիայ , ուր թուի սարջացեալ յանիրաւի գործոյն , և  
 գգացեալ թէ ըստ չար սերմանցն ունէր Սուաջնորդն  
 ցրտանալ ի սիրոյ , կամ գրել ինչ ներհակ առ Աւագե-  
 րէցն , գրէ անտի առ նա , եթէ ի միջոցին օտարադէմ  
 գրութիւն ինչ ի սրբազան Սուաջնորդէն ընթեռնուցուս՝  
 ոչ ընդոսանուցուս ի զարմացումն . վասնզի յետ թողոյ  
 իմ զՋուղայ , ոմանք թշնամութիւն ինչ ընդդէմ քո յա-  
 տենի Սրբազանին տարածեալ , թիրևս նորօք գրեզ փոր-




ձեւ կամիցի Արրազանն : Ուստի սպասիր մինչ ես դարձեալ ի Չուղայ , բոլորն ուղղիցեմ . զնմանն գրեալ ի Բումբայոյ և ի Բուչնայ , նաև ի Չուղայոյ իսկ թէ կէսն ուղղեալ եմ և մնացորդ կէսն ևս ուղղելոյ եմ Աստուծով . դու զմին թան կարմիր դամասկն վասն դատերս առաքեա՛ , զի կամիմք ամուսնացուցանել զնա :

Հասեալ ժամուն եկաւորութեան թղթոյ սրբազան Առաջնորդի առ Աւագերէցն , ըստ նախագուշակմանն օտար և խորթ յեղանակէ առաջնոց , հաստատէ ի մօրի գրան կեղծաւոր բարեկամին և տանէ լռութեամբ և յուսով կատարածին . մինչ հասեալ սպարոն Թ . Մանուկ վարժապետն ի Չուղայոյ այսր , (սա կերպիւ խմբ շնորհապարտ Աւագերիցուն , սակս շահասիրելոյ զնա կարեւորաւ թէ՛ ի Չուղայ և թէ՛ ի տեղիս) յետ երկիցս այցելութեան , յաւուր միում առանձին կոչէ զնա յեկեղիցին , ուր հանեալ զօրինակ կանխադրոյմ գրոյն տէր Մարտիրոսի առ Առաջնորդն , յանձնէ նմա երդմամբ ի չհանել զանուն իւր ցորչափ կենդանի է ինքն(17) . զի ասէ ո՛վ գիտէ , ի վերադարձն իմ անդ ի Չուղայ , զինչ չարիք ծնուցեն վասն իմ . որով յապուշկրթեալ Աւագերիցուն ընդ անակնունելի գործ նորին , որպէս յանուրջս խորասուզեալ ոք յալիս ծովու , չմարթանայ իմանալ թէ երևո՞յթ է զոր տեսանէ , թէ իսկութիւն արդեօք . և սոյն գրութիւն անյայտ սպհէ , մինչ տարաբաղապէս յետ փորու կանխեալ օրհասին , մեռանի նոյնինքն Թ . Մանուկն ի Կալկաթա :

Դուն ինչ տարրեր ընդ ժամանակաւն , դիպուածով խմբ յանձն լինի Աւագերիցուն , անդատին գրութիւն մի

(17) Թուի օրինակ գրոյն ընկալեալ յումեմնե աշակերտէ , որ երբեմն էլեմուտս գործել սովոր էր յառաջնորդարան անդր :



ի նորին տէր Մարտիրոսէ ի Բթալոյ առ անհատ ոմն ի  
 Կալիվաթա, լի ոխերիմ թշնամանօք ներհակ նորին Ա.  
 ւազերիցուն. որոյ գրութիւնն երկար յոյժ, միայն հա.  
 մառօտենք աստ դյօղուած մի վասն ապացուցութեան :

«Տխուր եմ որ էնչափ տարի դրան (այսինքն Աւա.  
 զերիցուն) ըսւ չճանաչեցի, կամ գուցէ յառաջ լաւ,  
 այժմ այդպէս ղինուորեալ ընդդէմ եկեղեցոյ. միայն  
 գիտէ Աստուած, որ ինչպէս ճանաչեցի, այնպէս պատ.  
 մեցի և հաւատացի. և ոյժմ ես իմ անձնականիս համար  
 ունիմ մտերմութիւն ընդ նմա և բաց ի շնորհակալու.  
 թեանց ոչինչ չունիմ ասելոյ. այլ ի մէջ պաշտամանց  
 հասարակաց ճանաչեմ զդա այր խոռվարար և նենդա.  
 ւոր և հայրենատեաց, ցանկացօղ ինքն օր մի յառաջ տե.  
 սանել զկործանումն Զուղայու, Աթոռոյն և ամենեցուն  
 միանգամայն. բայց ես ասեմ քեզ, Ստեփաննոս, իբրև  
 մարգարէարար, զի կործանումն զորա լինի հուպ և  
 կարի քստմեկի և այլն” :

Պարոն Յարութիւն հեղինակն և աներորդին, մինչ  
 գրէ թէ «տէր Մարտիրոս գնալով ի Կալիվաթա երեւցաւ  
 յաչս նորին զուղապատիւ իւր, տեսութիւնն աչաց ա.  
 ռաւել զօրացոյց զաներևոյթն իւր զգացմունս. վասն.  
 որոյ ցրտացաւ սէր բարեկամութեան նորա որ յառաջն  
 կայր ընդ մէջ նոցին : Տէր Մարտիրոս դարձաւ ի Զու.  
 զայ յետ քան զպաշտօնակիցն իւր գերադասութեամբ  
 կատարելոյ զգործ նուիրակութեանն ի Զաւայ ի մէջ  
 սահաւաթիւ և լի բարեպաշտ ժողովրդեան : Աւագ քա.  
 հանայն Կալիվաթու յամին 1857 սկիզբն արար զլորելոյ  
 զգժտութեան խնձորն և այլն” :

Մարգասիրարար աղաչի, որպէս քրիստոնէոյ դատել  
 թէ զկնի այնչափ ստակալի պարզ և յայտնի թշնամանոց  
 փեսային՝ ընդդէմ մեզմ պատուով և սիրով զնացից Ա.

ւագերիցուն ը՞դ նա , ո՞ր էր խնճորն գժտութեան և ո՞վ զլորիչ նորա , և թէ ուստի՞ ծագումն ցրտութեան սիրոյ և թէ ո՞վ անդգամ նախանձաւոր ի զուգապատուութիւն ընկերին . նաև թէ ո՞ր նշան նախանձու Աւագերիցուն : Այո՛ գիտեմ , զի որչափ ծանօթ անցիցս , ունի անդասին և ի շնորհուկ քեռն անգոսնկ տակաւին զիրաւունս մեր բանիւ , և համբուրել ի ներքուստ չբութամբ խղճի և սրտի . սակայն որպէս գիտէ , թո՛ղ ևս մտարերցի զձայն Աւտուածային . վս՛յ որ զլոյսն խաւար կոչիցէ և զխաւարն լոյս :

Արդարև Աւագերէցն՝ զկնի շնչատապառ լինելոյ անբէնութեան ընկերին , յամին 1859 Ապրիլ 8 գրեալ բազմաթերթ գրութիւն մի առ տէր Մարտիրոս ընկերն (թէ յարմարի կոչել զնա ընկեր ըստ առելի գործոյն) , լի սրով և ցասմամբ , լի քաղցր և դառն ոճով , լի իրաւամբ և յանգիւնանութեամբ , մանաւանդ և ի ներգրտութենէ որպէս մարդ յուսաՀատ , և անբարոյական ոճով յանգիման ածելով նմա զամենայն ոճիրն գործոյ , կոչէ յառեան իրաւարանութեանցն , (որպէսզի եթէ բարոյակաւնութիւնն մեր թոյլ տայր զօրինակն աշխարհալուր հռչակել , յայնժամ լերինք անգամ սոտախէլն և ամենայն մարբախիղճ անձն վկայելոյ էր զանգուածոյն տէր Մարտիրոսի . թէև օրինակ ասացեալ գրոյն ընդ հանգամանօք հետեւեալ անցից արդէն կղեալ կայ յոտս ոգորմածութեան սրբազնատուր Աթոզիկոսի անձար սլարտաւորութեամբ և ամօթով . թո՛ղ նա միայն խմսցէ զոր սրտաուլայ են սկէտք) . ընդ նմին և բողոք մի առ սրբազան Առաջնորդն՝ խնդրելով որոշումն և դատ ի նմանէ , (չմանալով թէ տարաբաղդապէս՝ թէ Գիղիգարար ինքն Առաջնորդ նուաճեալ ցայն վայր կտտարեւադործէ գրան իմաստնոյն թէ , «տեսի զձատայս հեծեալս ի ճիւ և զիշխաւ

նրա զի գնային իրրև զծառայս երկրի) : Նա յառաջ  
 նում հրաժարեալ զրէ իրր շկամի իրրև դատաւոր մտա-  
 նեւ ընդ խնդրոյն , (մինչ արգարամայ յասելն թէ չու-  
 նիմ կարողութիւն գիտադրելոյ նմա) , և ստիպէ յանյի-  
 շաչարութիւն ի ձեռն ակամայ մեղայականի նորին տէր  
 Մարտիրոսի , թէ ստիպմամբ սրբազանին առնել սրբ-  
 տաւորեաց և այն : Անդրէն որպէս անբաւական , կրկն-  
 եալ Աւագերիցուն զբողոքն առ Առաջնորդն , որով խո-  
 նարհեալ պանծաւոյն յառնէ յարուեստաւորեալ մեղա-  
 յական մի նոր , որով և բժշկեալ սիրտ նորուն , թողու-  
 և մոռանայ զամենայն . (չգիտելով թէ այնու գլուխն իւր  
 եղաւ ի կակուղ բարձի) : Այլ յստիպմանն Առաջնորդին  
 սակս սկզբնաւորելոյ զթեւ ըրեկամութեան ընդ նմա  
 ըստ օրինի անյելոյն , հակառակի նա , տալով իրաւունս  
 թէ ներելն միմեանց զյանցանս Աստուծային է շնորհ ,  
 այլ մոռանալն զմնաս թշնամոյն անասնական է ցնոր .  
 որպէս և զկնի գրեալ առ տէր Մարտիրոսն թէ ցանկամ  
 քեզ ամենայն ազգ երջանկութիւն , այլ չյանկամ այլ  
 ևս ունել ընդ քեզ թղթակցութիւն . ուստի Տէր ներեա-  
 ցէ մեզ զյանցանս մեր :

Ապարէն որ ինչ ցայս վայր ծանուցաւ ապացուցու-  
 թեամբ և ասացաւ թէ բնաւից դադաւաբք կան յա-  
 տենի սրբազնակատար վեհապետին մերոյ , տակաւին  
 չլինէր հարկ գրելոյ մեր աստ ինչ նոր ի ցաւ և ի վիշտ  
 ընթերցողաց , ի նախատինս ազգի և յանպատուութիւն  
 մեր , զի զինչ օգուտ բացումն ցաւոց առաջի անծանօթից  
 զոր դարմանելն չկարին , այլ ասելի է ճարտարարուեստ  
 բժշկին , որ կարէ ապարինել : Ըստ այսմ յետ միայն  
 տարածելոյ զաղերս մեր առ սուրբ Օծելութիւնն Հայրա-  
 պետին որ ընդհանուր դարմանիչն է ցաւոց ազգին , չու-  
 նէար ակնկալութիւն ցաւալի աշխատանայս այսոցիկ .

և եթէ չիցէր այս նստատակ մտաց մերոց , վաղուրեմն տարագրեալ զամեն իրաւունս ախո՛քար ի տեղեկութիւն ամենից և փրկէսք զանձինս մեր յարիւնասխանձ ոստիսաց մերոց . սակայն զի՞նչ արարից յորժամ հակառակորդք մեր աղգի աղգի միջոցսս բռնաբարչ առնեն զմեզ յայս օրինակ գործ անվայել . ուստի եթէ վրիպեալ ինչ իցեմք ոտվաւ ի մասին բարոյականութեան , թո՛ղ ամենայն ոք ներկայէ մեզ սիրով :

Պատուելի հեղինակն ասէ , «սրբազան Առաջնորդն ըստ այնմ մասին (այսինքն տուեալ նողկտալի ածակա նացն) արար հարցումն ըստ օրինի առ տէր Մարտիրոսն . որ եցոյց զինքն պատրաստ ապացուցանելոյ զգրեալն իւր փաստիւք զորս ի վկայութիւն ածէր և այլն» :

Մեք այժմ սիրով հարցանեմք ցտարոն հեղինակն , թէ ո՛ր յորդառատ սէր և շնորհ պաշտպանութեան յան պարս փեսայն ծաւալէ , թէ ո՛ր օրինօք ասէ հարցումն արարեալ . զի եթէ Աստուածային , արդէն միով վճռա հատեալէ սուր Աստուածային թէ , «որ ասիցէ ցեղբայր իւր մօրոս , պարտաւոր լիցի գեհէնին» : Արդ եթէ , ըստ բանի Տիառն , պարտաւոր գեհէնի , ապա ուրեմն ան զերծ և անարդար ի կեղծաւոր ատենին կենցաղոյս . այլ եթէ ասիցէ բաղաբական , ո՞ր դատախազ , յանգիմանել նմա առարկութեամբ ի ջրել զինքնատեղծ իրաւունս իւր . ապա այսու ամենայնիւ յայտ է որպէս սոցն միակողի յառաջ վարեալն բան , այնպէս և ամենայն իրաւունք խօսիցն ճարտարարուեստ հնարիցեն գիւտ , առ ի ստել զիրաւն և ճշմարտել զսուտն : Բայց մեք ո՛չ այնպէս՝ այլ խօսիմք ճշմարտութեամբ և ապացոյցութեամբ , որպէս և յուսամք իրաւաքննին դատակնքոյ նորին , որում համբարձեալ ունիմք զիրաւունս : Բայց եթէ տէր Մարտիրոս , անպարտն ի բազում սխարտիս , տակաւին

հունիցի զճանուցեալ ապացուցութիւնն իւր և բարեհա-  
ճեսցի, թո՛ղ շնորհ արարեալ եկեսցէ աստ ի հաստատել .  
ուր աստ քրիստոնէական օրէնքն առաւել քան զմահա-  
կին, Փալուան Հօսէն, Ղարուղին առնու զուղիղ ներ-  
գործութիւն : Սքղարև Տէր գիտէ զոր առնէ ըստ սլատ-  
շածին . զի որպէս բնութիւնն ինքնին սանձեալ գրեհրան  
և լեզու հեղինակին, առ ի չկարողանալոյ ասել առաւել  
քան զարժանն, բարեգոյն ևս լինիցէր եթէ սահման ինչ  
և ի գրիչն հեղոյր . թերևս չլինիցէր օն անդր քան զչափ  
արշաւել անզուսպ . այո՛, ո՛վ որ լեզու և գրիչ ունի, խօ-  
սել և գրել կարողէ . բայց խղճմտանօք ասել և արդա-  
րութեամբ գրելն ամենեցուն տուեալ չէ :

Ճառատելով Հեղինակին ասէ ևս . «Իտ թացաւ արեա-  
նել զխնձորն գծաութեան ընդ մէջ սրբազան Առաջնոր-  
դին և հասարակութեան Չուղայու ի կործանել զտէր  
Մարտ'րոս ի սլատուոյ և ի փառացն իւրոյ հաւատարու-  
թեան, վասնորոյ գրեաց առ վեշտասան անձինս՝ որո-  
չելով զոմանս ի հասարակութենէ Չուղայու, և ի նմին  
նամակի թագուցանելով զկիրս իւր ընդ ղիմակաւ ազ-  
գասիրութեան և այլն» :

Մեր ասելք ամենայն խօսք ի սարազայից և ի ձևոց  
անտի նիւթոց առնուն զիրաւունս, որպէս և որակք ի  
բուն սեռից . ահա յայտնի են, զի թէ գրեցին բազումք ի  
Չուղայոյ զանիրաւութեանց հոգևորականաց ոմանց,  
գրեաց և նա ինքն Ղազար հաւատարիմ սպասաւոր Ա-  
ռաջնորդի՝ զանգեղս և զանարժանս զնորին տէր Մար-  
տիրոսէ, (սր չթուէր առանց լռելեսայն կամաց Առաջ-  
նորդի. որովհետև հաստատեն թէ առանց հրամանի ջուր  
անդամ չառնու ի բերան . որպէս որոյ օրինակն ար-  
դէն առ յանդիմանող Հեղինակն գտանի, յորժամ առա-  
քեցաւ նմա բարեմտութեամբ և գրեցաւ խրատել զին-

նայն ի հաշտութիւն ընդ Առաջնորդին) . որ թէպէտ ան-  
 ստորագիր , սակայն ձեռագիր նորա և տեւողք , մանա-  
 ւանդ տէր Սեղբեստրոս(1) և իսկ առաքիչ գրոյն վկայէ  
 ընկալեալ ի նոցանէ . եկին պատմեցին Չուլոյեցիք ,  
 վկայեցին և եկեալք քահանայք (թէ և ոմանք զկնի երկիւ-  
 ղալից յետս ի գրաւոր վկայութեանց դարձան) թէ Ա-  
 ռաջնորդն ի նեղ անկեալ ընդդէմ արձակմանց և ապրա-  
 տամբութեան տէր Մարտիրոսի ի պատճառս չհասի հրա-  
 մանին Առաջնորդի առ ամուսնութիւն դստերն . յոյր  
 ընդդէմ ինքն որպէս Աւագերէց , հրամայեաց առնել և  
 արարին . գրաւոր վկայութեամբ հաստատեաց և պատկա-  
 դիր քահանայն առ Աւագերէցն : Արդ զայս ամենայն  
 լսելով բարեմիտ ընթերցողաց , զինչ առնուն ի միտ . ո՞չ  
 ապաքէն վիշտ , յուսահատութիւն , ցաւ և կողմնակի  
 խնդիր կարեկցութեան առ վերաժամանեալ աղէտս նո-  
 ցին ի Պարսկաստան յանիրաւ տէրութեան , ուր մշտա-  
 պատրաստ են փորձանք թշուառութեան ժողովրդոց ,  
 ոյր ընդդէմ եթէ Աւագերէցն , որպէս քահանայ , որպէս  
 հայրենասէր , որպէս բարեկամ Առաջնորդի և համօրէն  
 տան Չուլայու , գրեալ իցէ խնդիր և յորդոր (մանա-  
 ւանդ քողարկեալ կշտամբանօք) առ ոմանս ի քահանայից

(1)Տէր Սեղբեստրոս՝ մին յարդի վիճակաւորաց քաղա-  
 քիս , նախքան զբահանայանայն եւ զկնի ժամանակս  
 բազումս կայոյ եւ մնայոյ ի վանս , ծանօթ ամենայն  
 անցից տեղոյն եւ ընկերակից Ղազարու , սպասաւոր-  
 րին Առաջնորդի , ի գայն աստ խօսէր բազում ինք  
 ընդդէմ կառավարութեան . յորոց մին էր քե վանքն  
 մքերանոց ջալճոյ արարեալ , զնէն երժան եւ վաճա-  
 ռէն ծանրագին ի վերայ ժողովրդեան եւ արկանէն  
 զբազումս ի վնաս . որ եւ քաջ վկայեաց զգրոյն լինել  
 իսկապէս ձեռագիր նորին Ղազարու :

և յաշխարհականաց ի հայթայթումն հարկից կարեկցութեան և մշտնջենաւորութեան խաղաղութեան, սխալեալ է արդեօք. մանաւանդ յարգեալ պատուեալ և մեծարեալ զԱռաջնորդն ամենարժան ջատագովութեամբ որպէս Առաջնորդն ինքնին վկայեալ ունի ի վրէժխնայիք դրութեան անդ իւրում. ապա զի՞նչ հարկադրեցին զանմարդասէր խորհրդականս հրապուրել զմիտս Առաջնորդին, և նորա ընդունակ թշնամեացն բանից, յարեան ընդդէմ վկայեալ և պատուաւոր քահանայի միոջ առ ի մեռուցանել զնա կենդանւոյն. զի՞նչ էին հայցուածք և պաղատանք նորին քահանայի առ վեչտասան անձինս, բայց միայն սէր, միաբանութիւն և կարգադրութիւն, որպէս բողոքն վկայէ : Մանաւանդ որ երաշխաւորեանք էր ժողովրդեան իւրում յամին 1858 Ղեկտեմբեր 2 ի ժողովի հասարակութեան զբել ի Չուլայ և ջանալ առնել, զոք արարն և եզիտ յաներկիւղածաց զիւրն փոխադարձութիւն սերկեանս երկնաքնդդէմ աստեղատութեան, որպէս տպագրեալ անցք ժողովոյն ի Մարդասիրական ձեմարանի, առննթեր աչաց ընդհանուր Հովուապետին, վկայեն : Արդ թո՞ղ իրաւադատ լինիցին չտղք, զի թէ որ ունիցի պատիւ իւրասէր պատուաւոր ժողովուրդն երաշխաւորութեան, զիա՞րդ չկարէ վճարել և գիտատումն ի պատեհութեան. թէ և ոմանք ի նոյն ժողովրդոց չզարմանան լսել այսօր օտար ի կարծեաց, զներհակն ընդդէմ ճշմարտութեան և իրաւանց գործել ոչ խորչին. մե՞ղք հոգւոց իւրեանց :

Այլ, առէ հեղինակն, նա՛ այսինքն Առաջնորդն գրեաց առ Աւագերէցն կարկաթու զթուղթ ընդարձակ 52իջեան և այլն(2). բայց չասէ թէ ի՞նչ պարտաւորու-

(2) Բառական եւ բանական իմաստք ասացեալ գրոյն՝

Թիւն Առաջնորդին ի գրել զայն զիր դրպարտաթաւաշ ,  
զի եթէ կայր հարկ պատասխանուոյ , ի նոցունց վայելէր  
որոց գրեցաւ զիրն . մինչ ողորմելիքն երկիւզածակոծ ,  
յետս ի խորհրդոց բարեաց նահանջեալ , առին զզնաս  
հայհոյութեան և թշնամանաց , որպէս որ գրեցինն և որ  
գրենն , նաև որ գրեացն ՅԶիջևան ընդարձակ գրութիւն ,  
ընկալաւ և զպատասխանի երկպատիկ առաւելութեամբ .  
որոց երկոցունց ճիշդ օրինակքն արդէն , որպէս սասացաւ ,  
կան ի քննողութեան Սիօնի մեծ ի : Քող անդ քննեացեն  
և վճռեացեն , թէ ո՞ր անիրաւի և ո՞ր իրաւաշատ . ախոս  
որ ձեռք և ոտք մեր կապեալ յուսով իրաւագատութեան  
բարձրագոյն ատենին , չկարեմք հրատարակել զայնս ի  
լուր հասարակաց և ի զարմացումն ամենից :

Այո՛ , ի համբաւին թէ Առաջնորդն հրապուրմամբ  
թշնամեաց գրեալ ունէր զանիրաւ գրութիւնն առ Աւա-  
գերէցն , պարտաւոր եղեալ և նորա , արար զժողով հա-  
սարակաց , ո՛չ ըստ եղանակին , զորմէ ստղբեցան ստա-  
բանք թէ ողորմ զխօք , զողզոջուն շրթամբք , զպղկհար  
զխօք և այլն , այլ որ խկն է , տխուր զխօք , ցաւագնեալ  
սրտիւ , դառն տեսանարաւ և մորմորելի երկամբք հա-  
յեցեալ յաւէտ յախոսանս ներդին , որ հայէր ընդ եր-  
կար աշխատանսն ի պահպանութիւն վիճակին և պատ-  
ուոյ գլխոյն իւրոյ ընդդէմ յուրվակի անցուցեալ պատա-  
հարաց . որպէս ի նմին ժամու , յետ յայտնեոյ գնանբու-  
րութիւն ջանիցն առբերեալ յօգուտ ամենայնի բարե-

իսկ եւ իսկ են պատասխանիք նախայիշատակեալ  
Ապրիլ 8 գրութեան Աւագերիցուն առ տեր Մարտիրոս՝  
որոյ ճիգն վրեժխնդրութեան , որ տկարացեալ էր  
յայնժամ , պատեհութեամբն սաստկացեալ , հեղու-  
անուամբ Առաջնորդին . որոյ որոշումն է , վճիռն բո-  
գոս սրբագնակատաք վեհապետին :

կարգութեան , ասաց յայտնապէս թէ , մի՛ զարմանայք թէ պարտաւորեալ իցեմ յետս կոչել զերաշխաւորութիւն իմ ի ձեզ՝ յանցեալ 1858 Պեկտեմբեր 2 ժողովոյ ձեռ , արդ ձեզ լիցին հաճոյք առնելոյ զոր ինչ և ասոր ժիւր . որով ժողովն ինքնախորհուրդ վերջաւորութեամբ որոշեաց առնել զոր արար , առանց ունելոյ կախումն ինչ ի խորհրդոյ Աւագերիցուն , առ այս կամ առ այն : Ապացոյց սորին տեսաւ և ի նոյն Աւագերէցն . որ յետ ժողովոյն՝ ի խորին զգացմանէ ցաւոյ և տրտմութեան սրտին , դաւո՛րս իբրև քսան ընկրդմնեալ ի մահճի կրեաց զստկալի ցաւս ծնդան . որ կարծիւր յառաջեալ յիջուածոյ : Ահա՛ այս է միճակ տան Աստուածածանութի , ազգասիրի . և զարթունս ընկալնու ի նախանձաւոր չարաբարոյից . զորոց ամենայն ուրեք ազգք և ազինք բողբոքն :

Արդ՝ յանձն առնեմք դատել նոցա , որոց խիղճ չէ տկարացեալ աստիւ նախանձու և քինախնդրութեան . զի որ բարեմտութեամբ եղեալն էր միջնորդ խաղաղութեան ի մէջ եպիսկոպոսի և ժողովրդոց , գուն գործելով միշտ ի բարեկարգութիւն Հայրենոյ և ազգակցացն , մանաւանդ յապահովութիւն բարեհամբաւ և անբամբաս կեցից վանականաց , և գտեալն էր ինքեան ստոկալի մնասն որպէս տեղի կալաւ ի տրիտուր , չկարէ՞ր կամ չախտէ՞ր յայտնել ժողովրդեան զցաւս իւր : Ահա այս է և ոյսալիսի են իբաւունք տմանց իբաւամերժաց և օգտաքաղից ժամանակիս , որք կարծեմ յառանձին խողմունս իւրեանց , դատասպարտ և անիրաւի դատիցեն ատեան քաղաքականի օրինաց , թէ ընդէ՞ր հիմնեցաւ ի խրատել և սանձել զանուղղայս . ո՛չ ապարէն բարեգոյն լինիցէր մեզ անվեհեր թեւակոխումն յամենայն չարիս ըստ քմաց և անբարեխառն կրից մերոց , որ չափ և անդասին ենթալայ վրիժուն գործել ոչ խնայեմք : Աս .

աւար պատշտճի քերթուածն յուսեմնէ խմաստնոյ ։  
Բարեգոյն վիճակ՝ անկեալ մարդոյս է ,  
որ սահման կենաց ի ձեռն միմեանց չէ .  
Թէ ոչ՝ միանգամ աշխարհ անցանէր  
եղեռնագործի բանիւ յոչնչէ ։

Յետ ցայսլոյր սեթևեթմանց մտացածին բանիւք հեղինակին , որոց չվայելէր պատասխանի և ոչ մին , ի խոնարհագիր նշմարանս իւր փաստարանէ թէ , «վկայք են տէր Մկրտիչ և տէր Սեդրեստրոս քահանայք պարոն Ա. Մարգարիտան և պարոն Մելքում տէր Սիմէօնեան ի բանս իրեանց վիմատիպ հրատարակեալ ի Ապրիլաթա ի հերբումն իմաստից ինչ տետրակին պարոն Մ. Խ . Յովաղիմեանին» ։

Պատասխանի իրաւանց առ վկայող անձինս , արդէն ընդդէմ նախկին տետրակի հեղինակին վիմատիպ սրբութեցելոյ ի Ապրիլաթա սուեալ , չխտորիմք յերկրորդելոյ և այսու , զի կողմնական և երկբլմի դրոյցք որոշին ժամանակաւ և փաստիւք , որպէս իմաստք երկոքին զբաւոր վկայութեանց նոցին քահանայից հակառակ իրերաց , տարբեր նխթովք և ժամանակօք լուտարանեն . մին ի մեքում նախկին տպագրեալ տետրակի , և միւսն յինքեանց խակ յայտարարեցելովք , որք ոչ սյլ ինչ՝ քան զտմարդութիւնս և զյողոտղբ բնաւորութիւնս նոցին անձնամատն նշաւակեն ։ Մեք զմեր իրաւունս առ բանս նոցին ամբոտեմք , զի մի լիցի կարծել ումեք թէ կրիւք իմն իցէ . այլ թողումք ընթերցողաց տետրակացն մեր և նոցին վճուել թէ , ո՛րն հաւատալի և ո՛րն ոչ . և թէ հեղինակքն ո՛ր հողով և խզծիւ դրոշմեցին զայնս ։

Ի մասին Ա. Մարգարիտանի և Մ. տէր Սիմէօնեանի ոչ նուազ քան զառաջնոցն ցուցեալ զտմարդութիւն և գտեղական ստութիւնս իրեանց ոչ մեք և մերով դիմաւ

դրութեամբ , այլ ինքեամբք և իւրովք վիմատիպ տես-  
րակօք . զի մին զիւրն կիրս անհասուն լի ստութեամբ  
նշաւակեաց , և միւսն զիւր բրտութիւն և համարումն  
փերեզակական շահախնդրութիւնն կրկտանաց . ըստ  
այնմ թէ , «Տապանաբար սուրբ Յակոբայ եկեղեցին  
շինողին՝ թարց գիտութեան Առաջնորդի կողոստեցաւ .  
մինչ Առաջնորդն զներհակն յայտ արաւեալ , թէ իւրով  
գիտութեամբ և թոյլտուութեամբն եղեալ . տե՛ս զլրա-  
զիր Եզրայրատրի թիւ 16 , 1862 : Սակայն առաւել  
զարմանալի է անխիղճ և անհիմն հակասութիւն հեղինա-  
կին . որ իբրև ատենագիր և պաշտպան Առաջնորդի և  
փեսային , այր բանագէտ և քարոզող զինքն իրաւասէր ,  
կամակորի ի հանդէս ատելի ստութեան ընդդէմ տա-  
նարանեաց պատգամաց . զայսմանէ ևս թողումք իրա-  
ւաքննաց հատանել զվճիռ :

Ի բանն թէ , «յորժամ հասարակութիւն Զուղայու-  
յետ լսելոյ զայն եղելութիւն անցից (իբր ժողովոյ Կալ-  
կաթայու) , հերքեաց զնորին ձեռնարկութիւն , որպէս  
ստայօղ և տօգորինաւոր , և յայտնեաց զբաւարարու-  
թիւն իւր զհառաւարութենէ սրբազան Առաջնորդի և  
տէր Մարտիրոսի ևայլն՝ :

Ի պատտոխանի , մեք չունիմք հակասական ինչ ներ-  
հակ միոյն կամ միւսոյն , և ոչ ականատես եմք հանդի-  
սադրութեանցն յաջ կամ յահեակ . սակայն զայս կա-  
րեմք յարմարել թէ , զի եթէ ձեռնարկութիւն կամ  
հերքումն նոցին անբռնադատ սիրոյ լինէին պտուղ , ի  
բազում ամաց հետէ և այսր ո՛չ զներհակն գրէին և բո-  
ղոքէին աստ և անդ , և զնոյնասարաս զրոյցս յարգէին  
եկողք Զուղայեցիք . թէ՛ հաղևորականք և թէ՛ աշխար-  
հականք , և ո՛չ զկնի այնց բաւարարութեանց անդաւին  
հռչակէին թէ ինքնագիր նամականիք , ըստ սովորու-

Թեան , պատրաստեալ ի նորին աէր Մարտիրոսէ և յատենագարէ վանացն և կոչեալ զհասարակութիւնն ի ստորագրութիւն նոցին և նոքա յերկիւղէ գրնցին , առանց իմանալոյ զո՞՞ և զիմաստ զրուածոցն և այլն . ուրոյ ապացուցութիւն ո՛չ միայն նպատակաւ խելաց , այլ և ի բուն զործոց և ի պարագայից նոցին ճանաչի . զի արտաքոյ երկոցունցս վկայութեանց չգտաւ որ ի համօրէն ջուղայեցիս , ունեցող եռանդ նմանակից լինելոյ , այլ եկաց մնաց իրաւունք երկոցունց շահասնդիր հեղինակացս , փեսայի և աներորդոցն , ի դիմաց իւրեանց և այլոց դրել և տարածել ամենայն ուրեք ըստ քմաց և հաճոյից . և չիք մեզ վնաս թէ նախանձախնդիրք և անազգասէրք այնպէս ծանեան և հաւատացին :

Առ միւս յօղուած բանի թէ , «վայն՞ էր նմա՞ ըստ որում քահանայ և բարերարեալ ի սրբազանէն առնել զայնպիսի ձեռնարկութիւն և այլն» , ասեմք և ունիմք վրկայ մեզ զխիղճ մեր և զԱստուած , զի եթէ ամենայն ոք սիրող վայելչութեան պատկանաւորաց լինիցէր , ո՛չ մեզ և ո՛չ այլում ումեք մնայր վնաս դանդաւտանաց . զի իւրաքանչիւրք իւրավայել գնացիւք բառնայր զի ոչ և խութն բնութեանն , չծագիր յումեքէ ազազակ . թող զայն , որ Աւագերէցն ամենայն ուրեք յայտնի հաւատարիմ և պաշտպան հանդիսացեալ Առաջնորդին , և այսու ամենայնիւ ենթակայ եղեալ այժմեան վնասու մեծի . (յորում անդտին ցաւակից նմա հանապազօր ասէ , Տէր տացէ բարիս տէր Մարտիրոսին , որչափ նա արար մեզ չարիս՝ արկանելով զթշնամութիւն ի մէջ մեր հօր և որդւոյ , կացոց նշաւակ աշխարհի) : Զի չարար նա ծողով վատ դիտաւորութեամբ կամ ներհակ Առաջնորդին , այլ յաւետ փրկելոյ զՋուղայ և զԱռաջնորդն ի բռնաբարութենէ . այլ թէ ծողովն ընտրեաց առնել զոր արարն ,

այն հանդերձանք էր նորա ի փողնջուց , որպէս բազում օրինակօք նախադրեցաւ . և մանաւանդ գորով նորա քննանայ՝ ըստ օրինաց ի ներքոյ սրատասխանատուութեան խղճի , փոխանորդ Առաջնորդի և Աւագերէց համայն վիճակաց , սարտական էր մտադիր լինել աղաղակի և ցաւոց ծողութիւնսն . քանզի բազումք աջուճախ տրտնջէին և նորին իսկ հակառակորդք արդի ուխտագրութք : Ապա թէ ոչ , զինչ ցաւ նորա և զինչ սրտաւորութիւն յարայն . ահա յսպացոյց բանիս խմանալի է ամենեցուն հեշտին դատմունք խղճի , թէ ամենայն որ զարարս իւր ընծայէ երից բաղձանաց , այն է հոգ կեցութեան անձին , հարկ փառաւորելոյ զանուն և իղձ գանձելոյ զբարիս վերջին երանութեանց . թո՛ղ այժմ՝ բարեմիտք ողորմելով մեզ ասիցեն թէ ո՛ր ի սոցունց սարտաւորեաց զԱւագերէցն . զի եթէ ասիցէ որ զառաջինն , յայտնի է անկարօտութիւն նորա ի գոյս . եթէ զերկրորդըն , քաջայայտ է անխառասէր կեանք նորա . մանաւանդ ի սկզբանէ և նախքան գոտնակոխելն ի քաղաքս՝ միշտ ընդ սրատուարս և արժանաւորս հաղորդակցեալ և զանարգս մարդկանց զերթ զորժանաւորս յարգեալ , ի չորից և հնգից եպիսկոպոսաց վկայեալ և ամենայն ուրիք ոսկեարտ համբաւ և անունն ծաւալեալ . (թէ և ընդ հակառակն այսօր , շնորհիւ սրբազան Առաջնորդին և և քանի մի չարախնդիր նախանձաւորաց , կարծի տուայտեալ .) ապա ուրեմն երրորդն է , որ խորհրդածի կրօնին սրբութեան և երկիւղին Աստուծոյ . իսկ եթէ այսօրէս , ապա ուրեմն անքաւելի յանցանօք խորատուղին ի տարտարոսն մշտնջենաւոր՝ որք խոցեցին զնա ի սիրտ և

Առ այն զխնդարձութիւն հեղինակին թէ , «եթէ ստուգիւ հարստահարեալ իցէր Զուղայ ի կառավարութենէ սրբազան Առաջնորդին իւրոյ և կամ աւեր Մարտի-

բասի , մի թէ յայն աստիճան հող մեռելոյ ցանեալ կայր ի վերայ հասարակութեան , զի ո՛չ ոք ի նոցանէ բողբ քառնայր կամ զճիկ հանէր ի խնդիր օգնականութեան և այլն՝ :

Ապշութիւն մտայ հեղինակին , ընդ որ և զորմանալի փաստ լրաւանցն զարհուրեցուցանէ և զմիտս մեր , թէ զի՛նք մոռացեալ զբազումս , մոռացաւ և զազազակս բողբողայ մերազնէից Թեալիու 1857 ամին ընդդէմ անստորագիր բողբողայն զխառաւարութենէ վանայ՝ ո՛չ միայն տպագրեալ տետրակօքն ի Արկաթա , այլև միջոցաւ Արշարոյս լրագրի , որոյ արձագանգքն յոլորտս Հայոց ոչ նուազեալ , որչափ և զինի գանգատանք և գրաւոր աղէքսանք ճոխ ընտանեոց Արգարեանց ի տուն քարեհամբաւ Արգարեանց քաղաքիս , և ոմանց այլոց առ ընտանիս և բարեկամս իւրեանց . թողումք անմիջապէս զեկողայ պատմարանից զխօսան , թողումք զգրութիւն տէր Գրիգոր քահանայի , թողումք զգրաւոր մկայութիւնս տէր Մկրտչի և տէր Սեղրեստրոսի առ հաստատութիւն գրուածոյն ի նորին տէր Գրիգորէ . թողումք նաև զինքնագրաւ բողբ տէր Գասաւար տէր Սլաճօնի , թողումք և ևս զգրութիւնս ոմանց , որոց նիւթք տակաւին ոչ յատնեալ , յարգեմք զհաճոյս երկուց օգտաճարաւ և շահախնդիր հեղինակաց , փեսայի և աներորդոյ , առանց լրիւք թերահաւատութեան , և չասեմք բնաւ թէ սա սուտ և նա կեղծ , գրութիւնք սորին և նորին հաւատալի , բանք սորին և նորին քինախնդրութեամբ , ապա ուրեմն և երկու հսկայիցն երկիւղիւ և ինքնագովութեամբ . զայսմանէ թողումք նոյնպէս իմանալ նոցա , որոց խորհուրդ և խիղճ չէ մրճոտեալ ախտիւ ակնաստութեան . Եթէ ոչ , մեր ըստ մերում խղճի և հաւատոյ համոզեալ կամք և ապացուցանելն քաջկարեմք թէ բնաւ քս

ոյստքիկ ո՛չ յԱռաջնորդէն , այլ ի փեսայէ և յաներորդ-  
 ւոյ ծաղեալ , և անուամբ նորին Առաջնորդի կ'ըրեալ  
 միշտ : Բայց որ գորչէլին է և արժանի հիացման , ցայս-  
 վայր թոյլտուութիւն և խոնարհումն նորին վեհի ի հա-  
 ճոյս և ի գործս նոյլին . յոյր ներհակ դատնամք յաւելուլ  
 աստէն զոր երբեմն ասացեալ Աւագերիցուն յերկրորդ  
 ժողովի անդ , թէ ախոս , որ արբազան Առաջնորդն ո՛չ  
 զիւրն պատիւ պաշտպանեաց և ո՛չ զարդիւնս սրոյ և  
 քարեկամութեան իմոյ յի՛քն՝ ծանեա . այլ զերկտին  
 յարդ ախոսանաց զոհեաց յոտս խորամանկ թշնամեաց .  
 մնայ ուրեմն մինչ զգասցի . թէ և արդէն հաւատամք քաջ  
 զգացեալ :

Նա՛ եթէ ասիցէ որ զանվաւերո թեանց անստորագիր  
 թղթոյ . (որպէս ասեն ոմանք) , թո՛ղ զստորագրեալն  
 յարգեսցին . որոց օրինակքն ասացաւ եղեալ յոտս սըր-  
 բազնակատարկաթողիկաի , մանաւանդ զանստորագրո-  
 ղաց և կամ զանց առնողաց գիտել զերկիւղ սպառնալ-  
 եաց և պատժոց , նաև զհրամանս կալուկապից . ահա  
 րնթերցիր զյօդուած հրամանագրոյ յառաջ վառեալն ի  
 արբազան Առաջնորդէ , նպատակաւ իշխանութեան ընդ-  
 դէմ պատերազմին Անդղիսացոյ ընդ Պարսից(3) , ևս և  
 իրաւունս հարցի , թէ բարւոք ցուցանել գրութեանցն  
 զոր գրեն ի Ջուղայոյ , ուստի կարծի ծագումն փնասուն .

(3) Երրորդ՝ երբ որ ի Հայոց գրութիւն ինք զաղտ ի  
 մեր տեսութենէ առաքեսցէ ուր ուրեք եւ իցէ , եւ յայտ  
 եկեալ քրոյն՝ իցէ ի նմին սխալութիւն ինք բերե-  
 կամ ծանր , անձն այն ի ներքոյ անկանի պատարա-  
 սից դիւանին : Հինգերորդ՝ որ ինք գրութիւն յոր քա-  
 ղաբաց եւ իցէ յանուն Հայոց՝ մինք հասանիցի ի Ջու-  
 ղայ , կերպիակ առմեզ մատուցի . զի տեղեկացեալ  
 մեր իմաստիցն այնր՝ տեսուն իւրում դարձուցուր :

այլ ի հեռուոր վայրաց և ի Հնդկաստանէ եկեալ թղթոյ  
զինչ տարակուսանս վնասու առ հրաման կնքափակ մա-  
տուցանելոյ թղթեանց , քան կամք իմանալոյ զժածուկս  
այլոց (մինչ կարկատիցեն քեզ խմբ անյարիր կարկա-  
տանաւ) . վայ ժամանակիս դառն բերնանց , ընդ սրս և  
դառնացեալ դառնանան քաղցունք մեր :

Ի ցոյցն թէ «յետ ամենայն զործողութեանցն ի Ալա-  
կաթա , թուղթ սրբազան Առաջնորդի 52իջևան յիշա-  
ասկեալն ի վեր անդր , հասանէ ի Ալալիաթա և մտանէ  
ի ձեռս Աւաղ քահանային(4) . տեսանէ նա թէ հակա-  
ռակ կարծեաց իւրոց յուզեցաւ և ճարակեցաւ երկալա-  
ռակութիւն և զժտութիւն ի մջ հասարակութեան(5) ,  
և թէ առաւել ևս ունին ընդարձակիլ՝ յորժամ իմաստք  
թղթոյ սրբազանին ի յայանութիւն ելանիցեն(6) , աճա-  
պարեաց ի ձեռն եղբոր իւրոյ հրատարակել թէ սրբա-  
զան Առաջնորդն հատընտիր արարեալ ի նամակաց իւ-  
րոց զառանձին բանս և զյօդուածս հրատարակեալ է՞» :

Ի պատասխանելն մեր վերոյ հակարանութեան հեղի-  
նակին , թերևս ի նախապաշարելոյ լինիցիւմք անպտուղ .  
քանզի որ բուն նիւթոյ անտեղեակ , զժուարին է նոցա  
ի մի բովանդակել զգատմունս խզի . և վատ քան զամեն,  
պատահութիւնք թոյլ չտան մեզ հրատարակելոյ զ52իջ-  
ևան վրէժառու գրութիւն նորին սրբազանի և զերկալա-  
տիկ պատասխանի նորս , լի հրքեցողական փաստիւք

(4)Յետ իբրեւ քսան առուրց ժամանման գրոյն ի  
Կալկարա :

(5)Զարմանք մեծ է զի խոստովանի քե զիրն այն  
բանձրացուցիչ երկպառակութեան խմբին :

(6)Անուղղութիւն իմաստից գրոյն սրբազանի իհր-  
նին հերքե գիրաւուցն նորս ի դատաստանի անկող-  
մնասեր քննչաց :

և անժխտելի տարացուցութեամբ, (յորմէ միայն վրիւ  
պակ գտեալ վարկուածով տառ մի Ա, զորմէ ասէ յաւէտ  
կերպարան Չ տառի, քան կէնի նմանեալ,) որովք զոգւ  
ջիւր իրրև հայելի սարգ ցուցանին հրկկողմեան իրաւ  
ունք սրահանջի. ընդ որ և անտարակոյս վճիռ թէ ո՛վ  
ուզիղ և ո՛վ իրաւամբ. ո՛րն արդարութեամբ լցեալ  
և ո՛րն վրէժառու և Հակառակ հոգւով սեթեւեթեալ.  
(զորս ի գրգամանէ խռովայուզայ թուի, պարտաւոր  
իւնք ի վերջոյ հրատարակել ցաւօք սրտի). որ այժմ մի  
այն հեղինակացն է յայանի և ատենի իրաւադատ վեհա  
պետին. թո՛ղ և նովիւնք եզերեսցին իրաւունք : Բայց  
գիտասցէ և զայս հանձարեղ հեղինակն թէ որպէս սը  
խալեալ յամենայն կողմնապահ ջանս վաստակոյ, սխալի  
և յայս, զի տեսորակ մեր հրատարակեցաւ յետ ամօր  
եայ հռչակման իմաստոյ գրոյն Առաջնորդի առ աւագե  
րէցն. որոյ նիւթք գրեթէ առօրին հռչակեալ անգիտելի  
և եթ մնաց անձին մանկանց յորովայնի մարց. մանա  
ւանդ բանն հրաշալի ի մջ երկուց նշանաւոր և վկայ  
եալ անձանց, հարկադրէր զամենեսեան խմանալ զպտտ  
ճառն. ահա և այս մի խիթալի շնորհ արանցն (բայ ի  
միոյն՝ որ անհաղորդ յունակութենէն). որոյ սուտքեցաւ  
ասէ բացակնիք թուղթն, որ իրօք էր և եղև մակարդ  
ժողովոյն և ցայս վայր երկպառակութեանց. (խորհուրդ  
ծածկի միով ի սրտի խոշոցին. այլ մինչ յերկուս հա  
ղորդի վարկ իրրև հռչակ իմն ի լեւիս ամենեցուն հա  
ղորդեալ) և թերևս մասամբ իւր յաջողուածովք վերին  
զի միջոցաւ պատահարիս բացան, լուծան գալարողիք  
բողմանց և յայտնեցան ծածկեալ բնաւորութիւնք նոցա  
և որպէս սակի ի բովս զտեցան կիրք ի գաղտնիս բնու  
թեան. որով և ծանեաւ այր իւրաբանչիւր զյայանի և  
զձածով բարեկամս և զթշնամիս իւր. որով և ծանեաւ

գոր ի յոլով սանայ՝ հետէ չգիտէր և պատրեալն էր միշտ արտարին շողորթութեամբ ք :

Առ յատկորիչ նշմարանս , յոր Յուդա անուանէ զԱւագերէցն , չասեմք ինչ քան զգործս ըստ պաշտօնին յարմարել . թո՛ղ ծանօթք տայցեն իրաւունս թէ ո՛վ մատնիչ և բացօղ առանձին գրութեանց և ո՛վ Յովհաննէս սիրելի լանջակիրն վարդապետին և ի նախանձուխաչեցողաց քամող զարտասուս :

Ի պահանջն թէ «հարցանելի է նոյն քահանային , թէ առ ո՛ր պաշտօնատար անձն գրեաց նա զթղթեանս , թէ որպէս խոստովանորդի և այլն» .

Պատասխանի պատուով , թէ պաշտօնատարք ըստ նիւթոյ և ձևոյն գործոց զանազանին , որպէս և հոգևորն ի մարմնականէն տարորոշեալ ամենայն պարագայի ք , մանաւանդ յամենայն պաշտօնական գործս , թէ՛ և կեցական և թէ՛ քաղաքական . հարկիւ ի դէպ զան բանք ինչ ակամայ խօսից ի նպատ միջանկեալ խնդրոյն , թեր ևս անբարոյական և մնաստկար դիմակցոյն և ներհակ կողման , սա՛րայն օրէնք խղճի , հարկ իրաւանց , պատու մարդկութեան և խիթ երկիւղի Աստուածապաշտութեան թոյլ չտան անպարտ հրատարակման զոր գործեալն է յօգուտ իրերաց և ո՛չ առանձին կրից . արդ եթէ դէպքս նորչնտայի յաշխարհական տղխտաց , քանի՞ ողբալի և պսխարակնելի յեկեղիցականաց , մանաւանդ իբր վկայացնոց մեհազանց . մեք մերով տկար խնայուածով չկարեմք որոշել . այլ այչապի միայն խմանամք որ զհատընտիւր բանս առանձին ի գրուածոց պաշտօնակցին արկ ի լոյս ընդդէմ խնդրանաց գրչին , թէ առանձին զգրուածքս պահիցէք և որով թշնամանեաց զբազումս ընդ նա իբրև վրէժխնդիր մեծի յանցանաց . ոչինչ գործս բարի գործեաց , և թէ զայն առնել ասորժեաց ի նպատ և

յուժեղութիւն վրէժխնդրական բաղձանացն , արդարանայր տակաւին եթէ ըստ նիւթոցն յայտնիցէր թէ որ գրեաց զինչ գրեաց , ո՞ր վասն գրեաց , ե՞րբ գրեաց , առ ինչ վախճան և առ ինչ պարտաւորութիւնս . թերևս լինիցէր որոշումն և մխլթարութիւն սրտի անիրաւացեղոյն որոշակի և ո՛չ հասարակապէս :

Առ մեզ վերաբերեալն բան թէ « թղթակիցն ձեր գրէ առ Աւագերէցն փոխանորդ . . . , ի վերայ արդարութեան գրեալ լինիցի հպիակոպոսին խրոյ զհակասականս ինչ , հարցանելի է զի եթէ ի վերայ արդարութեան գրեալ լինիցի , ո՞ր երկիւղ կայ եթէ գրեալն ի յայտնութիւն ելանիցէ և այլն » :

Ասեմք ի պատասխանի թէ , արդարութիւնն խնդրի յարդարասիրաց , որպէս և իրաւունք ո՛չ յանիրաւաց , բայց յորժամ իրաւասէրք ոմանք՝ ըստ սաղրեւոյ խոռվայոյզ ժամանակիս , ընդդէմ խղճի , ներհակ անակնունելի իրաւանց և անհամեմատ մինչ ցայսօր ծանուցեալ ունակութեանց , լուացեալ զձեռս , զոտս և զխիղճս իւրեանց յարդարութեան , և զգեցեալ պատմուճան իմն նոր հրէշից , որպէս տեսաք և տեսանեմք , զիա՞րդ ոչ երկիւղայի . և միթէ բաղմակուղի սրահանջն ո՛չ ըստ մեծի մասին հպի ի սրբազան Առաջնորդն և ի կողմականս իւր ըստ ծանուցեալ գործոց , որք մինչ ցերէկ զԱւագերէցն ովտաննայիւ մեծարէին և այսօր ի խաչ հանել զնա աղաղակեն . ահա քեզ գաղափար վճիտ , պարզ և մաքուր :

Ի հատուածն թէ « Առաջնորդն չէր հբատարակեալ զիմաստ նորին սրաշտօնական գրութեանց և այլն » , ի պատասխանի չասեմք թէ ամօթ մեծ այսչափ հռչակ ստախօսին , այլ ասեմք լինէր հաւատալ այնպէս , եթէ սրբազան Առաջնորդն զգրութիւնն ամրափակ առաքիցէր առ Աւագերէցն , և ոչ անփակ առանձինն անծա-

նօթ , որովք՝ որպէս ասացաւ . ի վեր թէ ատորին հոչաւ կեալ խնատիցն , մնաց միայն անձանօթ անձին մանկանց . զոր թէ չառնիցէր այնպէս , տակաւին ոչ ճապարկիւր խնդիրս ցոյս վայր . այլ Աւագերէցն միայն կարգալով , և թէ արժան էր մին կամ միւս կերպ կառավարելով զամբոս անցեալ , համոզելոց էր զամենայն ի դիրս նախկին . բայց գիտաւորութիւն հեղինակացն չէր խաղաղասիրութիւն , ալ նկրտանք և ջանք վատարանութեանք խզելոց զէր ժողովրդոց զառ ի նմանէ և լուծանելոց դեպ սրաշտպանողական սիրոյ նոցին ի թիկանց նորա և գլորիւ զնա կարողապէս . որպէս ո՛չ միայն եղանակ այնք դրոյն ձև հետեւանացն իրաւարանեն , այլև արդի իմաստ գրութեան հեղինակին թէ , նա՛ այսինքն Աւագերէցն ունէր ի թիկունս իւր զէր և զհաճութիւն ժողովրդոց և զազատութիւն օրինաց տեղոյն . որում հարկ էր միջոցն ամենաբաւական յոյժ , առ ի կարող լինելոց ի դիմի հարկանել , և զինչ պօրեղազոյն քան ըզհնարս հնարից արկանելոց նախ ի նոսա խոտովութիւն : Ահա քեզ ապացոյց իրաւանց , վնճ՝ ասա իրաւանց դիւտական :

Ի կարկատանս թէ . «Քանի անգամ սիրով գրեաց առ նա Սրբազանն յետս կալ յանօգտակար և ի խոտվատէր առարկակայից և վասն շինութեան ազգին և եկեղեցւոց ունել զուշադրութիւն , առնելով բաւական են ասուլիսքն տագերականաց նման և այլն» :

Մէք պատասխանիւ ատորին այսպէս յարմարեմք , թէ ամենայն նիւթականք ի նիւթ սկզբնապատճառին դառնան , որպէս և ամենայն խօսք յառակայս իրեանց դարուն . զի ծառուցեալ իրաւունք (չասեմք անիրաւութիւն կամ հօւր մոլի ի շեալ ի դատարանի մեռելոց) յայլ յարաբարութիւնս կայացեալ , այն է ընդունայն պահանջն

ի վերայ տարարողը գործոյ նուիրակութեան , թէ չէր պարտ այսպէս կամ այնպէս լինել , և 2500 Աոնբանիոյ ուսուիք ծախս երթ և դարձի տէր Մարտիրոսի տուր քեզէն , կամ յայլմէ ջանա հոգալ և այլն , որում ընդդէմացեալ կերպ կերպ իրաւասացութեամբ , յոյր սակա և բազում անալի գրութիւնք անցեալ ի միջի , մինչ յաւուր տարեդարձի խնա ի կաղանդի , այնինչ քերդուածո՞վ իւր շնորհաւորեալ զամն նոր , յարէ և խնդիր ընդ ամին մեկնեցելոյ , թողուլ և զանչքութիւն ասից և լից անցելոյն . բայց ասա թէ բանսարկուն որ անդ մշտապատարաստ , եթ ո՞ղ արմատանալ զխնդիրն և զսէր , մինչ հա նապաղօր յուզէր զմիտս ողջախոհին , ո՞չ և ո՞չ բնաւ . ահա քեզ ուզիլ անցք բանին և ծանուցումն թէ որդն ի տանէն ասականէ զխնդինին :

Յիրաւունս հեղինակին թէ , « Գործն այն և խնդիր ծագեալ ընդ մէջ Առաջնորդի և քահանային է՝ և համարի հոգևոր խնդիր , որոյ օրինաւոր դատաւորն է վեհափառ Աթոռդիկոսն առ որ մատուցեալ կայ խնդիրն այն , վասնորոյ ո՞ր հարկ էր սոյն թղթակցին զխմել իվճիռ ձեր :

Ասեմք այս միայն պատճառական նորին պահանջ ի բաւացի , ընդ որ և մեր անդիտութեամբ պակասեցաք . ապա զկնի նորա այլ ո՞չ յարեցաք ի գրութիւնս նորա նոր . սակայն թո՞ղ սրբազան Առաջնորդն , ընդ փեսայ և աներորդի կուսակցացն՝ իրրե օրինապահք և ծանօթք կանոնաց և ծխից , ցուցցեն մեզ թէ ո՞ր հարկ պարտաւորեաց զինքեանս յեղ յեղուլ աստ ի տապաղրութիւն զինքնահնար գրութիւնս և տեստականիս ընդդէմ իրաւանց և մեր . որոց մրուրն գառն թմրիցոյց զաչս բազմաց անմեղաց , և թերեւ վտանգաւոր վախճան ընկալնուցու . ո՞չ ասպարէն զնասակար և անտեղի համարիւր ի նմին դատաստանի արարք իւրեանց : Այլ եթէ իրաւունս

կաննուն զմերն գրութիւն , չկարեն արդարանալ թուա-  
կանաւ և ժամանակաւ գրութեանց խրեանց , վաղ քաջ  
քան զմերն , ահա քեզ դիմադարձութիւն հակառակելի-  
բայց եթէ ըստ սովորութեան ասել կամկցին որպէս ու-  
րեք ուրեք այնպէս ձեայուցանեն) թէ մեզ տուեալ է իշ-  
խանութիւն առնելոյ զոր ակորթիմքս , այլ ձեզ կամայ-  
լում ո՛չ արտօնութիւն քննելոյ զվնաս մեր , և եթէ  
ջախջախեմք զզլուխ ձեր , լուռ լերուք և մի համբա-  
նայք զձեռս ի սպահարանել զվշտացեալ զլուխ ձեր , այն  
յատուկ է իրաւունք :

Առ այն բան հեղինակին թէ « Հասարակութիւն նոյն  
քաղաքի այնչափ տկա՞ր գտանէր ի դիտողութեան խր-  
ում , զի հարկ լինէր վասն սթափելոյ խնդրել զվճիռ լրա-  
զրոյ միոյ և այլն » : (7)

Ի պատասխանի այսմ՝ ծանրակշիռ հարցի՝ կարի գլխ-  
ուարին է մեզ նիւթել զհաւաստիս . քանզի որ ոչն է մշտ-  
եալ ի քաղաքս և ընդ երկար կենցաղավարեալ ընդ ա-  
մենեսին , ո՛չ կարէ գերթ զանձնափորձ իմանալ զար-  
ժանն . ուստի թէպէտ վայելէ ըստ մուտ և տեսին ասեղ՝  
մո՛ւտ և տես , սակայն ըստ կարևորին նշանախնցի աղջ-  
մամբ մնայ մեզ կար ասելոյ . Այո՛ կան բաւական անձինք  
իրաւադատք և ճշմարտասէրք , կարող լուծանելոյ զկասկ  
իմն դժուարին . սակայն հակառակասիրաց յուզումն ո՛չ  
միայն խառնակէ զիրաւունս նոցին , այլև յերկիւղէ  
պատուոյ դժուարաւ տայ մուտ գործել նոցա յանվհէր  
դատողութիւն ինչ ազգային (զի բնականապէս փարթամք  
միշտ վարին երկիւղածութեամբ և մերկն միայն ոչ երկն-

(7) Այս եւս մի նոր ջարարուեստ հնար՝ բաւական  
գրգռելոյ զկիրս բազմաց . ջտեսանելով կուրօրէն , քե  
ոյք ոմանք էին , որք գաջով գրեալսն իւրեանց ձախով  
ջնջեցին ի ցոյց վերջին տմարդութեանց :

չի յաւազուկայ) . նա մանաւանգ արդի մերազնեայք քաղաքիս ըստ հնոյն , ամենայնի տարբեր ողջոյն պաշտօնայիք և ըստ մեզայ մերոց ժամանակն ածեալ ի վերայ շամանդազ իմն օրրատօրէ անսիրութեան , նուազման , անչքութեան և ազգի ազգի անվայելչութեան , իրաքանչիւրոք հարկադրեալ է պաշտպանել զգլուխ իւր միայն :

Հատորակութիւնք զանազան հանգամանօք շաղկապեալ ընդ իրեարս (ըստ մասին ո՛չ անկախ ի դնացսն) , ու մանք ընտանեկան , ումանք գործառնական , ումանք ընկերական , և այլք այլ իմն պարաւանդական շղթայիք , սորին վտան ազատամտութիւն , անաչառութիւն , անտիւնդժ արդարութիւն և սէր կատարեալ ի բազմաց միջոյ բարձեալ , և ի տեղի սպրդեալ աւազելիք ազգաց . յորում թաղք համակրութեանց բռնաքարչին զհետ մեծամեծ վնասուց տան ազգի : Եւ սոյն խակախտ է , որ ամենայն ուրեք ներդործէ զխայթն կործանման , մաւանդ ի խնդիրս արգայինս թէ՛ ի ժողովատեղի և թէ՛ յառանձին խորհորդս . ուր կայծ մի հրդեհէ զմեծամեծ անտառս սիրոյ . և սոյն խակ հոգեկործան ախտն է , որ իրբև ի 50 ամաց հետէ և այսր , ծիւրէ , հիւծէ և մաշէ զազգային շուք տան , խնա՛ յաւետ զազգայինս Պալրոց , զունեցողն ի ծոց զամենարաւական դրամն և մուտս , որ յանհոգութենէ հատորակութեան , իրբև անապաքինելի ախտաժէտ զգլուխն իւր ի կարծր բարձի հոգեվար տանջի և ոչ թափէ զհոգին :

Սա նոյն խակ ախտն է , որ տայ տագնապիլ պատուաւորաց և ճոխացելոց կարեօք , ուսելոց բարեօք , պաշտնցողաց զպատիւս , և ունեցողաց զնշխարեալ յարգ եկեղեցոյ և ազգութեան , ուր ազատութեամբ տեղական օրինի , անկիրք միշտ յառնեն ի վերայ և սպառպատեն

զամենայն բարիս . սորին վասն խոշոյեանք ի դարոյցն  
անճարութեան դաստիարակեցան այլևայլ մակացու-  
թեամբ , մին ի բաց մեկուսանալ զլիտովին ի յօղից միա-  
բանութեան և ազգութեան՝ փոխանակ զնեւոյ զգլուխն  
ի փորձանա անսովոր . մին՝ թէ ինձ պատուաւորիս ա-  
նանկ է ընդ անարգս ասուքիւ միանալ . մին թէ յորժամ  
սէր և միաբանութիւն բարձեալ ի միջոյ , ի զուր լինին ո՛  
և իցէ ջանք մեր և երկունք ցաւոց , զի սր չէ օգուտ  
լսողին՝ վտանգ բերէ խօսողին . մին՝ ինչ պէտք ինձ թըչ-  
նոամանիլ սակս այլոց . և միւս այլք սոյն օրինակ վարկ-  
ուածովք բացակայ ի պէսպէս խնդրոց , զժուարանան  
իրաւարանելոյ ինչ հրապարակաւ . և այսու ամենայնիւ  
տուաւել ևս ընդարձակին արշաւանք ինքնաբոյժ կամս  
պաշտաց և լինին ախոսանաց արժանիք :

Ի սակի այսմիկ տարաբարդ վիճակեցելոյն ո՛չ միայն  
միջանկեալ ազգային առթիւք ո՛չ ՚ի շուք վայելչանան ,  
այլև օն անդր ճասպղեն անհամաձայնութեամբ իրերաց ,  
որպիսի է մերս առաջիկայ տրումալի պատահար . ո՛ր  
հոգիքն խաղաղասիրութեամբ որդիացեալք ընդ Հօրն  
եքինաւորի՝ ի նստել քրիստոնէաբար ի մի վայր և մտա-  
գիւր հետեանօք աւարտել զխնդիր և ներ սարգեալ զա-  
զեաս (պատկառիմք նշանադրել թէ՛ գտանի ի խմբի մե-  
րում անձն ձիւնասիայլ հերօք և հարստամեայ մեղօք  
հարստահացեալ՝ որ կատաղի ունակութեամբ ասէ , ուր  
ուրեք եթէ լսիցեմ՝ զձոյն խաղաղութեան , անդ արկից  
բունն մի գարշահոտութիւն . ահա քեզ անասուն կեն-  
դանի և մարդածև) քան թէ բացէ ի բաց ողբալ զիրա-  
ւունս գրկելոյն , ըստ օրինակի մերոց բարեկամաց պատ-  
ուաւորաց և ականաւորաց , որք հասու եղեալ տիրապէս  
պատահարիս դառն , վճռեն և տան մեզ իրաւունս . զբը-  
եալ և յայտնեալ ևս են սրբազնասորր Քահանայսպե-

տին , յորմէ խնդրեալ ևս զիրաւունս դատի . սակայն երանելի ևս լինելոյ էին եթէ տեղական պարտաւորութեամբ ջանս ի վեր : Բերէին ի բառնալ և զտեղական վնասաբեր խռովութիւնս , առ յոչ պատասխիլ քողոյ բարոյականութեան ոմանց . յորոյ կարծեցաւ քնդ երկար լինել ինչ և ի վերջոյ յաւուրս յայտոսիկ տեսաւ և ոչինչ . ահա պատճառ ստիպանաց խուզելոյ զիրաւունս ի բացուստ օտարաց և յանկողմնասէր անձանց :

Ահա՛ այսչափս բաւական պատասխանի ճորճապարտ պարոն Յարութիւն հեղինակին . խնդրեմք , եթէ նա ինքն և թէ այլք ի բանից իրաւանց աստի վնաս ինչ բնդդէմ պատուոյն առ ընկալեալ , ներելով մեզ տայցէ զայն՝ պատճառացն ինքնաշարժ և ինքնազրզիւ որ տեղի ետ մեզ և մերում ակամայ պարտաւորութեանն առ պատասխանին : Յորում մնամ բարեմխտ ընթերցողաց

Այակաթա , 50 Նոյեմբեր 1862 :

Բարեացակամ ծառայ ,  
Մ. Խ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ







« Ազգային գրադարան



NL0242623

